

## Վրաստանի կառավարություն

Պետական միջգերատեսչական հանձնաժողով

Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ



Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման  
ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի  
կատարման հաշվետվություն

2013 թվականի հունիս

**Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ**

Հասցե՝ Թբիլիսի, 0134, Ինգոբրոլվա փողոց համար 7, Կառավարության գրասենյակ, 5-րդ հարկ

Պատասխանատու դեմք՝ Զվիադ Զվիադաձե

Հեռախոս՝ +995 32 2923299, +995 32 2922632

Կայք-էջ՝ [www.smr.gov.ge](http://www.smr.gov.ge)

Էլ.-փոստ՝ zviadzviadadze@yahoo.co.uk

### Բովանդակություն

Ներածություն.....	4
I. Օրենքի գերակայություն.....	6
II. Կրթություն և պետական լեզու.....	11
III. Մեղիա և տեղեկատվության մատչելիություն.....	17
IV. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն .....	20
V. Սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում .....	33
VI. Մշակույթի և ինքնագոյի պահպանում .....	42

**Հավելված №1:** Վրաստանի բնակչության ազգային կազմը ըստ 2002 թվականի մարդահամարի տվյալների

### Ներածություն

Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի №348 կարգադրությամբ հաստատվեց «Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և 2009-2014 թթ. գործնական պլանը»: Այս ակտով, **Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմին** հանձնարարվեց մշակել և համակարգել ազգային փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը, ինչպես նաև **Վրաստանի կառավարության և Վրաստանի նախագահին առընթեր գործող խորհրդին** ներկայացնել հաշվետվություն: Այս գործընթացները համակարգված իրականացնելու նպատակով, Վրաստանի փոխվարչապետ, վերինտեգրման հարցերով պետական նախարարի 2009 թվականի հուլիսի 3-ի №14 հրամանի և 2011 թվականի հունվարի 24-ի №7 հրամանների հիման վրա ստեղծվեց **Պետական միջգերատեսչական հանձնաժողով**: Հանձնաժողովի կազմի մեջ մտան ինչպես վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությունը և պատասխանատու աշխատակիցները, այնպես էլ հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի իրականացման համար պատասխանատու պետական հիմնարկությունների, նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների, ք.Թբիլիսիի Սակրեբուլոյի և ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների երեք երկրամասային վարչությունների ներկայացուցիչները.

- Վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ
- Վրաստանի Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարություն
- Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն
- Վրաստանի Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարություն
- Վրաստանի Արդարադատության նախարարություն
- Վրաստանի Կրթության և գիտության նախարարություն
- Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն
- Հ.Ի.Բ.Գ. Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն
- Քննությունների ազգային կենտրոն
- Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողով
- Վրաստանի Ժողովրդական պաշտպանի աշխատակազմ
- Վրաստանի Հանրային հեռարձակում
- Թբիլիսիի Սակրեբուլո
- Քվեմո-Քարթլիի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի վարչություն
- Սամցխե-Ջավախեթի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի վարչություն
- Կախեթի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի վարչություն
- Վրաստանի նախագահի վարչություն
- Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդի աշխատակազմ
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան
- Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարություն
- Վրաստանի Ներքին գործերի նախարարություն

**Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն**

Մույն հաշվետվությունը արտացոլում է Վրաստանի գործադիր և օրենսդիր իշխանության կողմից 2012 թվականի Գործնական պլանով նախատեսված վեց ռազմավարական ուղղության՝ օրենքի գերակայության, կրթության և պետական լեզվի, մեդիայի և տեղեկատվության մատչելիության, քաղաքական ինտեգրման և քաղաքացիական մասնակցության, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրման, մշակույթի և ինքնագոյի պահպանման համաձայն իրականացված ակտիվությունները:

# 1. Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունը հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի ռազմավարական ուղղություններից մեկն է: Այս տեսանկյունից Վրաստանի Արդարադատության նախարարությունը և նրա ենթակայությունում եղող կառույցները, ինչպես նաև Վրաստանի ներքին գործերի նախարարությունը ակտիվորեն ընդգրկված են հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և Գործնական պլանի իրականացման գործընթացում: Այս տեսակետից, նախանշված խնդիրներն իրականացնելու համար, 2012 թվականին Վրաստանի նախարարությունները և դրանց ենթակայության ներքո գտնվող կազմակերպությունները իրենց իրավասությունների շրջանակներում իրականացրել են միջոցառումներ տարբեր ուղղություններով:

## *Արդարադատության տներ*

2012 թվականին Արդարադատության տներ բացվեցին Թբիլիսիում, Ղվարելում, Թելավում, Գուրջաանում, Օգուրգեթում, Գորիում, Մառնեուլիում և Ախալցխիսեում: Վրաստանի Արդարադատության նախարարության կողմից ստեղծված բրենդի՝ «Արդարադատության տան» միջոցով ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում բնակվող բնակչությանը հնարավորություն տրվեց օգտվելու հազվագյուտ սերվիսից և ստանալ արագ և արդյունավետ սպասարկում: Նշված բրենդի ստեղծմամբ մեկ շենքում միավորվեց Վրաստանի Արդարադատության նախարարության բոլոր այն կառուցվածքային միավորը, որը իրականացնում է քաղաքացիների սպասարկում, այդ թվում. Պետական սերվիսների զարգացման գործակալությունը, Հանրային ռեեստրի ազգային գործակալությունը, Ազգային արխիվը, Գործադիր ազգային բյուրոն, Նոտարական պալատը, Տվյալների փոխանակման գործակալությունը, Արդարադատության տունը իրականացնում է նաև կրթության նախարարության սերվիսներից մեկը՝ ատեստատներ տալը:

«Արդարադատության տունը» կողմնորոշված է քաղաքացիների արդյունավետ և բարձրորակ սպասարկմանը: Արդարադատության տան միջոցով ազգային փոքրամասնությամբ բնակեցված տարածաշրջաններում բնակվող բնակչությունը հնարավորություն ունի ստանալ Մանուկյան, Բնքնության, Ամուսնության վկայական, վավերացնել փաստաթուղթը ապոստիլով կամ օրինականացման ճանապարհով, մտցնել հայտ քաղաքացիության, բնակության, սովորական այցեհրավերի ստացման վերաբերյալ և ստանալ մինչև 300 անուն սպասարկում մեկ շենքում:

Ախալցխիսեի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի օգոստոսի 8-ին: Այն օրական միջին հաշվով սպասարկում է 364 քաղաքացու: Բացման օրից մինչև 2012 թվականի վերջը Ախալցխիսեի Արդարադատության տունը սպասարկեց 37 163 քաղաքացու:

Մառնեուլի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 10-ին: Այն օրվա ընթացքում միջին հաշվով սպասարկում է 801 քաղաքացու: Մառնեուլի արդարադատության տունը բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկեց 63 281 քաղաքացու:

## Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն

Թբիլիսիի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 21-ին: Բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկել է 210 696 քաղաքացու: Օրվա ընթացքում Թբիլիսիի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 5 491 քաղաքացու:

Օգուրգեթի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի ապրիլի 13-ին: Բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկել է 93 169 քաղաքացու: Օրվա ընթացքում օգուրգեթի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 509 քաղաքացու:

Գուրջաանի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի հունիսի 12-ին: Բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկել է 54 359 քաղաքացու: Օրվա ընթացքում Գուրջաանի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 383 քաղաքացու:

Թելավի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 15-ին: Բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկել է 37 413 քաղաքացու: Օրվա ընթացքում Թելավի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 486 քաղաքացու:

Ղվարելի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 17-ին: Բացման պահից մինչև օրս սպասարկել է 13 618 քաղաքացու: Օրվա ընթացքում Ղվարելի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 179 քաղաքացու:

Գուրիի արդարադատության տունը բացվեց 2012 թվականի սեպտեմբերի 26-ին: Բացման պահից մինչև 2012 թվականի վերջը սպասարկել է 50 790 քաղաքացու: Օրվա ընթացքում Գուրիի արդարադատության տունը միջին հաշվով սպասարկում է 758 քաղաքացու:

### ***Հանդիպում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ***

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեն ամեն տարի հանդիպելու Վրաստանի արդարադատության նախարարության ներկայացուցիչներին և բարձրպաշտոնյա անձանցից անմիջականորեն ստանալու նախարարության իրավասության ոլորտի մեջ մտնող և նրանց հետաքրքրող հարցերի պատասխանը: Այս կարգի հանդիպում տեղի ունեցավ Վրաստանի արդարադատության նախարարության և Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների միջև:

2012 թվականի ապրիլի 12-ին ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ հանդիպում կայացավ Վրաստանի արդարադատության փոխնախարարի և Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդի փոխարտուղարի մասնակցությամբ: Հանդիպմանը ներկա էր շուրջ 30 մարդ, այդ թվում ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամներ, Վրաստանի ժողովրդական պաշտպանի օֆիսի, ոչկառավարական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպմանը ներկա հասարակայնությունը հնարավորություն ունեցավ ստանալ տեղեկատվություն Վրաստանի արդարադատության նախարարության մարկետինգի վարչության, Քաղաքացիական ռեեստրի գործակալության, մարդկային ռեսուրսների կառավարման դեպարտամենտի, միջազգային հանրային իրավունքի դեպարտամենտի, Վրաստանի արդարադատության նախարարության վարչության պետի և Վրաստանի գլխավոր դատախազության ներկայացուցիչներից: Նշված անձանց

### կատարման հաշվետվություն

կողմից պատրաստված զեկուցումների հետ միասին հանդիպմանը ժամանակ էր հատկացված բանավեճի և հարց-պատասխանի համար:

Հանդիպմանը քննարկվեցին տարբեր թեմաներ, այդ թվում Արդարադատության տների կողմից մատուցվող սերվիսների, էլեկտրոնային Ինքնությունը հաստատող վկայականի, Վրաստանի արդարադատության նախարարության արխիվներում պահպանվող տեղեկատվության հասանելիության, քաղաքացիության, Վրաստանի արդարադատության նախարարությունում մտնող գերատեսչություններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների աշխատանքային զբաղվածության, անվճար իրավաբանական օգնության և խորհրդի անդամներին հետաքրքրող այլ հարցեր:

Վրաստանի արդարադատության նախարարության ներկայացուցիչները իրենց մոտ նշեցի՞ճ բոլոր հարցերը, որոնց մասին խորհրդի անդամներին լրացուցիչ տեղեկատվություն կպահանջվեր: Նշված հարցերով տեղեկատվություն ուշացումով գրավոր ձևով կուղարկվի Վրաստանի ժողովրդական պաշտպանի օֆիսին աղընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին:

### Գնչունների գրանցում

Վրաստանի արդարադատության նախարարության պետական սերվիսների զարգացման գործակալությունը ոչկառավարական կազմակերպությունների՝ նորարարությունների և բարեփոխումների կենտրոնի (IRC) և փոքրամասնության հարցերով եվրոպական կենտրոնի (ECMI)-ի հետ համագործակցությամբ շարունակում է գնչունների գրանցման հարցերով աշխատանքը: Վրաստանում բնակվող գնչու բնակչության գրանցման հիմնախնդի կարգավորման և այս հարցերով իրավասու հիմնարկությունների գործունեության համակարգման նպատակով 2012 թվականի ընթացքում իրականացավ մի քանի հանդիպում պետական սերվիսների զարգացման գործակալության, Վրաստանի Արդարադատության նախարարության, Վրաստանի Ազգային Անվտանգության խորհրդի, փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնի և նորարարությունների և բարեփոխումների կենտրոնի մասնակցությամբ: Համակարգված աշխատանքի պլանավորման նպատակով որոշվեց, որ Վրաստանում բնակվող գնչունների մասին տվյալներ ECMI –ն կփոխանցի պետական սերվիսների զարգացման գործակալությունը: Գործակալությունը իր հերթին ECMI –ի կողմից ներկայացված տվյալները կհամեմատի տվյալների բազայի հետ, տեղեկատվությունը այն անձանց մասին, ովքեր չեն հայտնաբերվի գործակալության տվյալների բազայում, իրավական օգնություն ցուցաբերելու նպատակով, կփոխանցվեր նորարարությունների և բարեփոխումների կենտրոնին, որը պետական սերվիսների զարգացման գործակալության ներկայացուցչի հետ միասին կիրականացնեք արտագնա այցեր գրանցման և ինքնության հաստատման վկայագրեր տրման համար անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու նպատակով: Վերջին հաշվով, պետական սերվիսների զարգացման գործակալության ձեռքբերած տեղեկատվության մշակման հիման վրա կվարեր ծննդյան իրավաբանական փաստի



հաստատումը, քաղաքացիության հարցերի կարգավորմանը կամ Ինքնության վկայականի տրման համար անհրա՛եշտ ընթացակարգերը:

Տվյալները գրանցման բազաներում վերստուգելու նպատակով փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնը (ECMI) Լենինովկայի և Գաչիանի բնակատեղիներում բնակվող գնչուների 265 – հոգիանոց ցուցակ փոխանցեց պետական սերվիսների զարգացման գործակալությանը: Վերստուգման արդյունքում պարզվեց, որ փաստաթղթավորման հետ կապված հիմնախնդիր ուներ 81 գնչու: 2012 թվականի ընթացքում նորարարությունների և բարեփոխումների կենտրոնը պետական սերվիսների զարգացման գործակալության վայրերում ներկայացուցչի հետ միասին իրականացրեց մի քանի արտագնա այց Ռուսթավի և Գաչիան: Նշված այցերի շրջանակներում կարգավորվեց 18 գնչուի գրանցում և Ինքնության վկայական չունենալու խնդիրը: 13 գնչուի նկատմամբ սահմանվեց ծննդյան իրավաբանական նշանակություն ունեցող փաստը, իսկ 2 գնչուի շնորհվեց քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ: Չնայած այցերի ամսաթվի և տեղի նախնական տեղեկացմանը, բոլոր մարդկանց հետ հանդիպել չհաջողվեց, համապատասխանաբար չհաջողվեց նրանց հիմնախնդիրների լուծումը: Այս հարցով աշխատանքը շարունակվում է:

***Ազգային փոքրամասնությունների զբաղվածությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության կառուցվածքներում***

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը անցկացրեց մի շարք միջոցառումներ, որպեսզի օժանդակեն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ուստիկանության շարքերում զբաղվածության համար: Նախարարությունը առավելությունը շնորհում է փոքրամասնությունների աշխանքային զբաղվածությանը ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում: Նշվածի հավաստում է հանդիսանում 2012 թվականին Վրաստանի ներքին գործերի նախարարության մարմիններում զբաղվածների վիճակագրությունը, որը այսպիսի տեսք ունի:<sup>1</sup>

Ադրբեջանցի	11
ասորի	2
հույն	2
քուրդ	1
օս	4
լեհ	1
ռուս	10
հայ	35

Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն

Ուկրաինացի	3
Ընդամենը	69

<sup>1</sup>ՆԳ նախարարությունում զբաղված անձանց ազգային նշանով նկարագրությունը կամավոր է և կատարվում է աշխատակիցների ցանկության հիման վրա:

### ***Բրոշյուր «Խտրականության անթուլատրելիության» մասին***

2012 թվականին Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի հետ միասին Վրաստանի ներքին գործերի նախարարության ակադեմիայի կողմից Եվրամիության «Վրաստանի ներքին գործերի նախարարության ուսուցման զարգացման» նախագծի շրջանակներում պատրաստվեց և հրատարակվեց բրոշյուր «Խտրականության անթուլատրելիության» մասին:

### ***«Մարդու իրավունքների պաշտպանություն – խտրականության անթուլատրելիություն» վարժանք տարածաշրջաններում***

2012 թվականի ընթացքում վարժանքներ «Մարդու իրավունքների պաշտպանություն – խտրականության անթուլատրելիություն» թեմայով անցկացվեց հետևյալ տարածաշրջաններում. Կախեթի, Աճարիա, Սամեգրելո-Ջեմո Սվանեթի, Սամցխե-Ջավախեթի, Մցխեթա-Մթիանեթի: Նշված վարժանքների սերիա անցկացվեց Եվրամիության «Վրաստանի ներքին գործերի նախարարության ուսուցման զարգացման» նախագծի շրջանակներում և այն գլխավորում էին Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմը և Արդարադատության նախարարության փորձագետները:

### ***Վրաստանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների հանդիպում Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների հետ***

2012 թվականի մարտի 7-ին ներքին գործերի նախարարությունում տեղի ունեցավ հանդիպում Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդը անդամների հետ: Նախարարության կողմից հանդիպմանը ներկա էին ներկայացուցիչներ հետևյալ ենթաբաժիններից. Պարետային ուստիկանության դեպարտամեն, միջազգային հարաբերությունների դեպարտամենտ, իրավաբանական վարչություն, ներքին գործերի նախարարության ակադեմիա, ինչպես նաև Վրաստանի ժողովրդական պաշտպանի

աշխատակազմի աշխատակիցներ, այդ թվում Վրաստանի ժողովրդական պաշտպանի տեղակալ, փոքրամասնությունների կենտրոնի ղեկավար և խորհրդի շուրջ 15 ներկայացուցիչ: Նշված միջոցառումը իրականացավ ներքին գործերի նախարարության և Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի միջև 2010 թվականի փետրվարի 4-ին կնքված փոխհամագործակցության հռչակագրի շրջանակներում: Հանդիպմանը քննարկվեց ներքին գործերի նախարարության ընթացիկ գործունեությունը ազգային փոքրամասնությունների պաշտպանության համատեքստում: Կոնկրետ, ուշադրությունը կենտրոնացավ ոստիկանության դերին ռասսայական խտրականությունը արմատախիլ անելու և կանխարգելման գործում, խախտումների փաստերին արձագանքումը բարելավելու միջոցները և փոքրամասնությունների զբաղվածության հարցին ոստիկանությունում:

***Վրաստանի ներքին գործերի նախարարության ակադեմիայի թաղամասային տեսուչների և պարեկային ոստիկանության բազիսային դասընթացի ունկնդիրների համար տեսության դասախոսություններ ազգային փոքրամասնությունների թեմաներով***

2012 թվականի մարտի 13-ին ներքին գործերի նախարարության և Վրաստանի ժողովրդական պաշտպանի միջև 2010 թվականի փետրվարի 4-ին կնքված փոխհամագործակցության մեմորանդումի շրջանակներում կայացավ հանդիպում Վրաստանի ժողովրդական պաշտպանի հետ, ով ՆԳՆ ակադեմիայի թաղամասային տեսուչների և պարեկային ոստիկանության բազիսային դասընթացի ունկնդիրների համար տեսության դասախոսություններ կարդաց ազգային փոքրամասնությունների թեմայով: Դրա հետ միասին, Վրաստանի ժողովրդական պաշտպանը հանդիպեց ազգային փոքրամասնության ներկայացուցիչ գործող և ապագա ոստիկաններին, Վրաստանի ներքին գործերի նախարարության ակադեմիայում ավելացավ ուսման տևողությունը, ինչը արտացոլվեց այնպիսի դիսցիպլինների վրա, ինչպիսիք են քրեաժին օրենսդրությունը և մարդու իրավունքները, մասնավորապես մարդկանց իրավահավասարության խախտում և ռասսայական խտրականությունը, ինչպես նաև խտրականության անթուլատրելիության հարցերը դասավանդմանը մեծ ուշադրություն է հատկացվում ինչպես թաղամասի տեսուչների, այնպես էլ պարեկային ոստիկանների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին:

***Վրաստանի Սահմանադրությունը ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով***

Վրաստանի Սահմանադրության նոր խմբագրությունը կողիֆիցիրացված տեքստով թարգմանվեց և հրատարակվեց ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Հրատարակությունը բաժանվեց երեք տարածաշրջանների՝ Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջանների ինքնակառավարման մարմինների և

ոկտավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Ընդհանուր առմամբ հրատարակվել է 500 օրինակ:

### *Հանդիպում Մառնեուլի, Ծալկայի և Թեթրիձղարոյի բնակչության հետ*

2012 թվականի մայիսի 25-ին Մառնեուլի գամգեոբայում «Մառնեուլիի երիտասարդական կենտրոնի» և Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի նաշխատակազմի կազմակերպմամբ կայացավ բնակչության հետ հանդիպում: Հանդիպմանը Մառնեուլի, Ծալկայի և Թեթրիձղարոյի շրջանների տեղական բնակչությանը հաղորդվեց տեղեկատվություն Վրաստանի արդարադատության նախարարության և Վրաստանի դատախազությունում իրականացված և ընթացիկ բարեփոխումների, Վրաստանի քրաձին քաղաքականությունում անցկացված փոփոխությունների մասին:

## II. Կրթություն և պետական լեզու

Քաղաքացիական ինտեգրման ամենալուրջ մարտահրավերներից մեկը ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվին չտիրապետելն է, ինչը նշանակալիորեն խոչընդոտում է նրանց լիարժեք մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին: Այս տեսակետից Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և նրա ենթակայությունում գոյություն ունեցող հանրային իրավունքի իրավաբանական դեմքերը ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման ռազմավարության շրջանակներում անց է կացնում միասնական քաղաքականություն ազգային փոքրամասնությունների քաղաքական ինտեգրման ուղղությամբ: Քաղաքականության նպատակն է այնպիսի համապարփակ միջոցառումներ անցկացնել, որոնք ազգային փոքրամասնությունների համար ապահովում են կրթության մատչելիությունը, նպաստում են պետական լեզվի ժողովրդականացմանը և նաև, ազգային փոքրամասնությունների լեզվական և մշակութային կենսակերպի պահպանմանը: Կրթական քաղաքականության շրջանակներում, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում ազգային փոքրամասնությունների համար վրաց լեզվի դասավանդման ծրագրերին, մասնավորապես, վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի, ուսումնառության բարելավմանը կողմնորոշված նախագծերի մշակմանը և իրականացմանը:

### *Վրաց լեզվի տներ Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում*

2009-2011 թվականներին Վրաստանի կրթության և գիտության նախարարության «Վրաց լեզվի ծրագրի» շրջանակներում ապահովում էր Նինոժմինդայի և Ախալքալաքի լեզվի տների և Դմանիսի և Բոլնիսի վրաց լեզվի կենտրոնների ֆինանսավորումը 22 500 լարիի չափով (յուրաքանչյուր կենտրոնի համար): Նշված գումարը ծախսվում էր վրաց լեզվի տների և վրաց լեզվի կենտրոնների անձնակազմի աշխատանքի վարձատրության համար: Դիտողական առարկաների, գրքերի, ուսումնական և գրասենյակային նյութերի ձեռքբերման, ընթացիկ կոմունալ և այլ անհրաժեշտ ծախսերի մարմանը:

2011 թվականի հոկտեմբերից վրաց լեզվի տների և վրաց լեզվի կենտրոնների վարչարարությունը վարում է Ջուրգբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը:

2011 թվականին «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի շրջանակներում լրացուցիչ երկու վրաց լեզվի տուն ստեղծվեց Քվեմո Քարթլիի տարածաշրջանում, մասնավորապես, Գարդաբանիում և Մառնեուլիում, իսկ 2012 թվականին նոր վրաց լեզվի տներ ստեղծվեցին Ծալկայում և Իոթմուղանլոյում:

Լեզվի տունը հաշվառակված է ունկնդիրների մի քանի կատեգորիայի վրա. Դպրոցի սնօրեններ և ուսուցիչներ, հանրային աստիճանավորներ, դիմորդներ և այլ շահագրգիռ անձինք: Լեզվի տունը ունկնդրին առաջարկում է վրաց լեզվի ինտենսիվ դասընթաց:

Ունկնդիրների դիֆերենցացիան կատարվում է մի կողմից ըստ լեզվի տիրապետման մակարդակի, ինչը սահմանվում է նախնական թեստի հիման վրա, մյուս կողմից՝ նրանց գործունեության սպեցեֆեկայի հաշվառմամբ:

### *Օսական կիրակնօրյա դպրոց*

2012 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից «Փոքրամասնությունների լեզվի պահպանության ենթածրագրի» շրջանակներում ապահովվեց 11-րդ հանրային դպրոցի բազայի վրա օսական կիրակնօրյա դպրոցի ֆինանսավորումը: 2012 թվականին օսական կիրակնօրյա դպրոցում 20 ունկնդիր ուներ հնարավորություն սովորելու օսերեն լեզուն, մշակույթը, պատմությունը, բանահյուությունը, կովկասյան պարերը և երգերը:

### **Մուլտիլինգվային ուսուցմանը նպաստող ծրագիր**

2012 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարության նախարարությամբ ստեղծվեց բիլինքային ուսուցչի ստանդարտը: Գործընթացում ընդգրկված էին ինչպես նախարարության մուլտիլինգվային կրթության փորձագետներ, այնպես էլ փոքրամասնությունների հարցերում ԵԱՀԿ-ի բարձրագույն լոմիսարի օֆիսի կողմից ֆինանսավորվող միջազգային փորձագետներ Մարինա Գուրբոն և Լիզիտա Գրիգուլեն:

### կատարման հաշվետվություն

2012 թվականին թարգմանվեց և հրատարակվեց մուլտիլինգվային ուսուցմանը նպաստող ծրագրի շրջանակներում և փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն կոմիսարի աջակցությամբ ստեղծված մեթոդոլոգիական ռեսուրս ուսուցիչների համար լուլտիլինգվային ուսուցման մեջ (ուսուցիչների ուղեցույց մուլտիլինգվային ուսուցման մեջ):

2012 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարության և հրատարակությունների միջև ձևակերպված պայմանագրի շրջանակներում հրատարակությունների կողմից թարգմանվեց առաջինից մինչև վեցերորդ դասարանը ներառյալ բոլոր առարկայից մեկական գրավիրացվա դասագիրք հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նշվա դասագրքերում նյութի 30% վրացերեն է, իսկ 70%-ը՝ հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն լեզուներով: Հասկանալի է, որ թարգմանության որակի գնահատման գործում ընդգրկված էր Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմից աղընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհուրդը: Մուլտիլինգվային դասագրքերը կիրառվեցին պիլոտային դպրոցներում որպես երաշխավորվա ուսումնական նյութ:

### **«Սովորեցնենք վրացերենը, ինչպես երկրորդ լեզու» ծրագիր**

«Սովորեցնենք վրացերենը, ինչպես երկրորդ լեզու» ծրագիրը նախատեսում է վրաց լեզվի և գրականության որակյալ ուսուցիչների գործուղում Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղերի այն ոչվրացական դպրոցներ, որտեղ առանձնապես սուր է դրվա վրաց լեզվի իմացության և ուսուցման հարցը: Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում վրաց լեզվի ուսուցման տեսակետից բավական բարդ իրավիճակ է: Ծրագրի նպատակն է ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում վրաց լեզվի ուսուցման օժանդակություն և վրաց լեզվի և գրականության արհեստավարժ զարգացումը: 2009-2012 թվականներին մրցույթին մասնակցեց մինչև 1000 մարդ, նրանցից թեստավորումը և հարազրույցը հաջողությամբ անցավ միայն 86- մարզիչ-ուսուցիչ: Ներկայումս աշխատանքով զբաղված 75 մանկավարժ: Նորընտիր մարզիչ-ուսուցիչներ անցնում են վարժանքներ հարցերից. «Վրացերենը ինչպես երկրորդ լեզու ուսուցանեթու մեթոդիկան» (50 ժամ), «Ազգային և կրոնական հանդուրժողականություն» (5 ժամ) և ադրբեջաներեն կամ հայոց լեզվի ուսուցման արագ դասընթաց (50 ժամ): Միայն սրանից հետո մանկավարժները բաշխվում են Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղեր: Այս գյուղերում բնակչության համարյա 100%հայ և ադրբեջանցի է: Նրանց մեծ մասը չի տիրապետում վրացերենին և մեծ մասը՝ նաև ռուսերենը: Սրանից ելնելով գործուղված ուսուցչից գոնե տարրական մակարդակով կպահանջվի տեղանքում կիրառվող լեզվի իմացություն, որպեսզի հաստատի համայնքի հետ հարաբերություն, ընդգրկվի միջոցառումներին ծնողներին և այլ ուսուցիչներին: Այս ծրագրի շրջանակներում վարձակալած ուսուցիչները, ժամավճարից բացի, պետական ծրագրից ստանում են աշխատավարձ 1000 լարիի չափով: Ծրագրի նպատակն է ոչվրացալեզու բնակչության շրջանում պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացում, ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում՝ վրաց լեզվի ուսուցիչների մասնագիտական զարգացում է, վրացերենի՝ ինչպես երկրորդ լեզվի ուսուցման բարելավում, ազգային փոքրամասնությունների ինտեգրման գործընթացին աջակցություն: «Սովորեցնենք վրացերենը, ինչպես երկրորդ լեզու»ծրագիրը

### կատարման հաշվետվություն

իրականացվում է Ախալքալաքում, Նինոծմինդայում, Ծալկայում, Բոլնիսում, Դմանիսում, Մառնեուլիում և Սազարեջում: 2012 թվականին ծրագրի շրջանակներում երկու անգամ (ապրիլ-մայիս, սեպտեմբեր-դեկտեմբեր) անցկացվեց մոնիտորինգ: Մոնիտորինգի մասնագետները կատարեցին դաշտային աշխատանքներ և ուսուցիչների գործունեության գնահատման նպատակով հարցրեցին դպրոցի տնօրեններին և ուսուցիչներին ծրագրի մոնիտորինգի շրջանակով որոշված գնահատումները փոխարինող հատուկ հարցաթերթերի և դիտարկումների ձևերի կիրառմամբ: Գնահատողները ներկա էին բոլոր մարզիչ-ուսուցչի կողմից անցկացված դաս/վարժանքին: Ծրագրին ընդգրկված ուսուցիչներ դասեր անցկացրեցին 4106 աշակերտի:

### *Վրաց լեզվի ուսուցիչներ մրցույթ*

2011 թվականին կրկին հայտարարվեց մրցույթ վրաց լեզվի ուսուցիչների նոր կադրեր ընտրելու համար: Ծրագրին ավելացավ 12 մարզիչ-ուսուցիչ: 2011-2012 թվականներին ընտրվեցին միայն սերտիֆիկացված ուսուցիչներ, ովքեր գործուղված էին Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի ոչվրացալեզու դպրոցներ:

Ծրագրի մասնակից ուսուցիչները դպրոցներում վրաց լեզվի ուսուցման հետ զուգընթաց անց են կացնում վարժանքներ ուսուցիչների համար, կազմակերպում են տարբեր միջոցառումներ (ամանորյա, ամառային, աշնանյին միջոցառումներ, պոետներին և գրողներին նվիրված օրեր, կրոնական-ազգային տոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, ներկայացումներ և այլն), որոնց նպատակն է համայնքում վրաց լեզվի ուսուցման մոտիվացման աշխուժացում, պետական ծրագրին ընդգրկվածության աճ, համապատասխանաբար փոքրամասնությունների ինտեգրման գործընթացի աջակցություն: Նոր մանկավարժի ժամանումից հետո գյուղերում լեզուն սովորողների խումբ «Վրաց լեզվի ակումբ» է ձևավորվում: Ակումբում միավորվում են դիմորդներ, ուսուցիչներ, ծնողներ և համայնքի այլ ներկայացուցիչներ: Որոշ գյուղերում ցանկացողների թվաքանակը մի քանի խմբերի ստեղծման անհրաժեշտություն է ստեղծում: Ծրագրին ընդգրկված ուսուցչի պարտականությունն է, ինչպես նաև տեղական վրաց լեզվի ուսուցիչների նախապատրաստում/վարժանք և նրանց մասնագիտական զարգացման աջակցություն: Ակումբերի սարքավորման և ուսումնական գործընթացի արդյունավետ վարման համար ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը ծրագրին ընդգրկված դպրոցներին փոխանցեց անհրաժեշտ գույք, աուդիո-վիդեո սարքավորանք, ուսումնական-տեսական նյութ և գրենական պիտույքներ, դիդակտիկ իրերի հավաքածուներ: Վրաց լեզվի ակումբում ընդգրկված են. 19897 աշակերտ, 175 ուսուցիչ, 566 համայնքի ներկայացուցիչ:

### *Փոխանակման և բարեկամական նախագծեր*

2011-2012 թվականներին «Սորեցնենք վրացերենը, ինչպես երկրորդ լեզու» ծրագրի շրջանակներում պլանավորվեցի և իրականացվեցին փոխանակման ծրագրեր: Հայկական և ադրբեջանական դպրոցները բարեկամացան տարևը տարածաշրջանների վրացական դպրոցների հետ: Շուրջ 30 մարզիչ-ուսուցիչներ գտան գործընկեր դպրոց Վրաստանի տարբեր տարածաշրջաններում (Թբիլիսի, Գորի, Գարդաբանի, Սազարեջո, Չաքվի, Ջեստափոնի, Խաշուրի և այլն) և կազմակերպեցին

փոխանակման միջոցառումներ, ինչը նախատեսում է միմյանց մոտ այցելություն և բնակություն 1 շաբաթվա ընթացքում, դասերին ներկա գտնվել, ընդհանուր համերգ, ներկայացում, տարբեր կերակրատեսակների ծանոփացում, վրաց ուղղափառ, հայ առաքելական եկեղեցիների, մզկիթների և այլ մշակութային հուշարձանների դիտում: Փոխանակման նախագծի եզրափակիչ հանդիպու հաճախ տեղի է ունենում Թբիլիսիում, որտեղ նախագծի մասնակիցներին հնարավորություն է տրվում, այցելել ուսուցչի տունը, ծանոթանալ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի աշխատակիցներին և տեղեկատվությանը «Սովորեցնենք վրացերենը, ինչպես երկրորդ լեզու» ծրագրո մասին: Բարեկամանալու նախագծերին հաճախ հանդիպում են երեք (վրացական, հայկական, ադրբեջանական) ազգության աշակերտներ և ուսուցիչներ, ինչը ինտերմշակութային հարաբերության խթանիչ է:

***Ազգային ուսումնական օլիմպիադայի անցկացում հայերեն, ադրբեջաներեն կամ ռուսերեն լեզուներով***

2011-2012 ուսումնական տարվա ազգային ուսումնական օլիմպիադաներ անցկացվեցի՝ Վրաստանում գործող բոլոր հանրակրթական հիմնարկություններում, այդ թվում ոչվրացալեզու դպրոցներում: Նշված դպրոցներում ազգային ուսումնական օլիմպիադա անցկացվեց հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով, իսկ ոչվրացալեզու դպրոցների աշակերտները մասնակցեցին նաև վրաց լեզվի օլիմպիադային: Երրորդ փուլի հիման վրա բացահայտվեցին հաղթանակած աշակերտները, այդ թվում ազգային փոքրամասնության ներկայացուցիչները:

***Դպրոցի ավարտական քննությունների անցկացում հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով***

2011 թվականին անցկացվեցին ավարտական քննություններ ողջ Վրաստանի մասշտաբով 1470 հանրակրթական հիմնարկություններում, այդ թվում, ոչվրացալեզու դպրոցներում: Նշված քննություններ անցկացվեցին հատուկ համակարգչային ծրագրի կիրառմամբ: Ոչվրացալեզու դպրոցի/սեկտորի աշակերտներին իրավունք տրվեց հանձնելու վրացերենը, որպես երկրորդ լեզու: Ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց մայրենի լեզվով հանձնելու պատմություն, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և մաթեմատիկա: Դպրոցի ավարտական քննությունների հիման վրա, լրիվ ընդհանուր կրթությունը հաստատող փաստաթուղթ ստացավ 1621 հայալեզու աշակերտ, 1675 ադրբեջանալեզու աշակերտ, 1672 ռուսալեզու աշակերտ:

***Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստական-ինտեգրման դասընթացի արմատավորմամբ***

2010-2011 ուսումնական տարին սկսվեց 2009 թվականին նոյեմբերին բարձրագույն կրթության օրենքում մտցված այն փոփոխության գործնական իրականացմամբ, որը նախատեսում էր ազգային փոքրամասնությունների դիմորդների համար պետական ուսումնական հաստատություններում հանձնելու համար ընդունելի տեղերի ընդհանուր թվաքանակի 5-5% հատկացրեց ադրբեջանալեզու և հայալեզու ուսանողների համար: Դիմորդները, որնցից պահանջվում է միակ քննության ընդհանուր ունակությունների թեստը մայրենի լեզվով հանձնել, բարձրագույն ուսումնական



### կատարման հաշվետվություն

հաստատություններում ընդունվում են վրաց լեզվի նախապատրաստական ինտենսիվ կուրսում: Օրենսդրությամբ երաշխավորված արտոնյա քաղաքականության համաձայն, մեկ քննություն հանձնելը տարածվում է միայն ազգային փոքրամասնության ներկայացուցիչների վրա (վրաց լեզվի նախապատրաստության ծրագրով հանձնել կարող է Վրաստանի ցանկացա քաղաքացի, եթե նա ընդհանուր ունակությունները կհանձնի հայերեն և ադրբեջաներեն լեզուներով): Մյուս դիմորդները բարձրագույն ուսումնական հաստատություններ 2011 և 2012 թվականներին ընդունելության մրցույթում քննություն չորս առարկայից հանձնեցին: Լեզի մեկամյա նախապատրաստական դասընթաց անցնելուց և 60 կրեդիտ հավաքելուց հետո ուսանողները ուսումը շարունակում են իրենց կողմից ընտրված կրթական ծրագրով (եթե ուսանողը դրամաշնորհ ձեռք կբերի վրաց լեզվի նախապատրաստության ծրագրով, բակալավրիատում ուսումը շարունակելու դեպքում նա ֆինանսավորվում է 2250 լարիով մինչև ուսումը ավարտելը):

2012 թվականին համազգային քննություններին ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա, Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց.

- Ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա՝ 390 դիմորդ,
- Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 200 դիմորդ:

Պետական կրթական դրամաշնորհով 2012 թվականի համազգային քննություններից միայն ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա ֆինանսավորվեց.

- Ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա՝ 93 դիմորդ,
- Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 98 դիմորդ:

Հատկանշական է, որ քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, ոչվրացալեզու ուսանողների թիվը ավելացավ նախորդ տարիների համեմատությամբ: Օրինակ, 2010 թվականին 247 ոչվրացալեզու ուսանող հանձնեց բարձրագույն ուսումնական հաստատություն, 2011 թվականին՝ 430-ը, իսկ 2012 թվականին՝ 589-ը:

### ***Ծրագիր «Վրաց լեզուն ապագա հաջողության համար»***

2012 թվականին շարունակվեց «Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի» ծրագիրը «Վրաց լեզուն ապագա հաջողության համար, որի նպատակն է օժանդակել Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրումը: Ծրագրի նպատակային խումբ են ներկայացնում Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթում և Կախեթում գոյություն ունեցող ոչվրացալեզու դպրոցների աշակերտներ, ուսուցիչներ, դպրոցի տնօրինություն և տեղական համայն: Ծրագրի շրջանակներում 2012 թվականին միջոցառումները մի քանի ուղղություններով իրականացան.

### կատարման հաշվետվություն

1. Մանկավարժի գործուղում ոչվրացալեզու դպրոցներում վրացերենի տիրապետման մակարդակի բարելավման նպատակով: ՀԻԻԴ «Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը» մրցույթի կարգով ընտրեց և գործողեց 237 բակալավրի որակավորում ունեցող մասնագետ, ովքեր օգնում են տեղական ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչներին դասավանդման գործընթացի երկու լեզվով վարելու և վրաց լեզվի դասը վարելու մեջ: Դա նպաստում է մի կողմից աշակերտների և մանկավարժների վրաց լեզվի իմացության մակարդակի և, մյուս կողմից տեղական բնակչության վրացերենի տիրապետման մակարդակի բարելավմանը բնակչության հետ ինտեգրման և դասերի հետագա միջոցառումների իրականացման ուղիով:

2. Վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսումնական նյութի պատրաստում, պետական լեզվի չգիտենալու կամ ոչլիարժեք տիրապետելու հիմնախնդիրներից ելնելով, «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի շրջանակներում ստեղծվեց վրաց լեզվի տիրապետման մակարդակների համաձայն սահմանված, առարկայական ծրագրին հենված դասագրքեր: Ինքնըստիներքյան մակարդակների համակարգը ուսուցչին հնարավորություն է ընձեռում, այս կամ այլ դասարանում մտցնել հաղորդակցության մեթոդին հիմնված այն մակարդակի դասագիրք, որը համապատասխանում է այն կոնկրետ դասարանի աշակերտների լեզվական պահանջմունքներին:

2012 թվականին ստեղծվեց և հրատարակեց դասագրքի V-VI մակարդակ տարրական աստիճանի համար: 2012 թվականի վերջին ավարտվեց աշխատանքը դասագրքի VII-IX մակարդակների բազային աստիճանի համար:

Վրացերենի, որպես երկրորդ լեզվի, դասագիրքը կառուցվել է ժամանակակից մանկավարժության սկզբունքների վրաս, որի անկյունաքարն է լեզվի հաղորդակցական ուսուցումը: Հաղորդակցական-ինտերակտիվային մեթոդը նշանակալիորեն տարբերվում է լեզվի ուսուցման ավանդական և քերականական-թարգմանչական մոտեցումից: Նմանապես պատրաստվում է ուսուցչի ձեռնարկ: Հատկանշական է, որ պատրաստվեց թեմատիկ առդիոնյութ դասարանային աշխատանքի համար: Յուրաքանչյուր մակարդակի դասագիրքը տպագրվեց 20 000-ական տպաքանակով և բաժանվեց ոչվրացալեզու դպրոցներում նրանց կողմից ուղարկված պահանջներին համապատասխան:

Օժանդակ ուսումնական նյութերի ձևով ստեղծվեցին հատուկ համակարգչային խաղեր, որոնք հատկացված են ոչվրացալեզու աշակերտների համար և համապատասխանում են «Վրացերենը որպես երկրորդ լեզվի նոր դասագրքի» թեմատիկային:

Հատկանշական է, որ 2012 թվականի հունիսին կրթության և գիտության նախարարության ՀԻԻԴ «Կրթության որակի զարգացման ազգային կենտրոն» կողմից անցկացվեց ազգային գնահատում «Վրաց լեզվի ուսուցումը ոչվրացալեզու դպրոցների առաջին դասարանում»: Գնահատման մեջ ընդգրկված էին 73 դպրոց (7 Թբիլիսիից, 4 Կախեթից, 38 Քվեմո Քարթլիից և 24 Սամցխե-Ջավախեթից) և 1065 առաջինդասարանցի (102 Թբիլիսիից, 58 Կախեթից, 555 Քվեմո Քարթլիից և 350 Սամցխե-Ջավախեթից), ինչը նշանակում է, որ ընդհանուր թվաքանակի 20% անցավ թեստավորում (ընդհանուր առմամբ Վրաստանի մասշտաբով ոչվրացալեզու դպրոցներում 5200 առաջինդասարանցի): Հարցում անցկացված ուսուցիչների 85,5%-ը ցուցադրեց պետական լեզվի տիրապետման բարձր մակարդակ, 12,1%-ը՝ բավարար, իսկ 1,5% ցածր: Ազգային գնահատման դրական արդյունքը հաստատեց, որ ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների կողմից վրաց լեզվի տիրապետման մակարդակը բարելավվել է:

### ***Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոց***

Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի նպատակն է ապահովել Վրաստանի կենտրոնական և տարածաշրջանային մակարդակներով կառավարման և ինքնակառավարման մարմիններում զբաղված հանրային աստիճանավորների մշտական մասնագիտական աճի և զարգացման համար համապատասխան ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ մասնագիտական-լուսավորչական ծրագրերի ընտրությունը և իրականացումը: Դպրոցը ցանկացողների՝ առաջարկում է հետևյալ կարճաժամկետ և երկարաժամկետ լուսավորչական և մասնագիտական զարգացման ծրագրերը երկու փուլով.

#### **Կարճաժամկետ դասընթացների ցանկ.**

- Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարում
- Ֆինանսական մենեջմենտ
- Նախագծի կառավարում և մոնիտորինգ
- Մարդկային ռեսուրսների կառավարում
- Իրավական հիմունքներ և գործավարություն
- Մենեջմենտի հիմունքներ

#### **Երկարաժամկետ դասընթացների ցանկ.**

Վրաց լեզվի ուսուցման դասընթաց (տարեկան 3 ամիս փուլ առ փուլ),

Անգլերեն լեզվի ուսուցման դասընթաց (տարեկան 3 ամիս փուլ առ փուլ):

2012 թվականի ճունվար-փետրբարին 75 հայկական դպրոցի տնօրեն անցավ վրաց լեզվի 6-շաբաթյա ինտենսիվ դասընթաց: Կարևոր է նշել, որ «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագրի շրջանակներում, որը ազգային փոքրամասնությունների համար վրացերենի ուցուցման ուժեղացում է նախատեսում, 2011 թվականի հոկտեմբերի 1-ից Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գործող վրաց լեզվի տները վարչարարություն է կատարում Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը:

## III. Մեղիա և տեղեկատվության մատչելիություն

Ազգային փոքրամասնությունների տեղեկատվության տեսանկյունից նշանակալից քայլեր կատարվեց Վրաստանի հանրային հեռարձակման երկու վրացալեզու և մեկ ռուսալեզու ալիքի կողմից: Վրաստանի հանրային հեռարձակումը միակ լրատվական միջոցն է երկրում, որն էլ օրենսդրությամբ ստանձնել է պարտավորություն պատրաստելու հաղորդումներ փոքրամասնությունների լեզուներով, այն ապահովում է երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքը՝ ստանալ տեղեկատվություն իրենց մայրենի լեզվով: Հեռուստատեսային հաղորդումներից բացի պատրաստվում են նաև ռադիոհաղորդումներ, որոնք ազգային փոքրամասնությունների լեզուներով նրանց հիմնախնդիրները և նրանց հետաքրքրող հարցերն են լուսաբանում: Այստեղից ելնելով, մեծ ուշադրություն է դարձվում ամենօրյա հաղորդումներին աբխազերեն, օսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նույնպես մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը և Վրաստանի նախագահի վարչությունը ֆինանսավորում են հայալեզու և ադրբեջանալեզու տպագիր հրատարակությունները:

### ***Լրատվական հաղորդում «Մոամբե» փոքրամասնությունների լեզուներով***

«Մոամբե» լրատվական հաղորդումը հեռարձակվում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հաշվի առնելով հեռուստադիտողի հետաքրքրությունը և առավել արդյունավետության համար: Վրաստանի հանրային հեռարձակման լրատվական «Մոամբե» հաղորդումը տարածվում է 2 տարբեր եթերի միջոցով՝ *1-ին ալիքի*<sup>9</sup> (առավոտյան ժամերին), *2-րդ ալիքի* (երեկոյան ժամերին, կրկնությամբ առավոտյան ժամերին) և նաև տարածաշրջանային հեռուստաընկերությունների եթերով: Դրա համար 2011-2012 թթ.ձեռք բերվեց ամենալավ եթերային ժամանակը (այսպես կոչված՝ «պրայմ թայմը՝ 20.00 ժամից մինչև 23.00 ժամը) Մառնեուլի «Մառնեուլի ՏՎ»-ով և Բոլնիսի «Բոլնել»-ով: Նշված ալիքներով լուսաբանվում է ադրբեջաներեն «Մոամբեն»: *Զուգդիդի »Օդիշ»-ով* հաղորդվում է «Մոամբե» աբխազերեն լեզվով, իսկ Նինոծմինդայի ՏՎ «Փարվանայով» «Ախալցխիս 9-րդ ալիքով) և Ախալքալաքի «ATV12»-ով հաղորդվում է «Մոամբե» հայերեն լեզվով: Այս արտադրանքը տարածաշրջանային հեռուստատեսություններին փոխանցվում է հատուկ համացանցային սերվիսի միջոցով: Ամեն օր պատրաստվում էր լրատվական բլոկ, որը պարունակում է 8-10 սյուժե. յուրաքանչյուր սյուժեի տևողությունը միջին հաշվով 1 րոպե է: Մեկ լեզվով թողարկումը միջինը 9-10 րոպե է շարունակվում: Տեղական կայաններն իրավունք ունեն հավելյալ կրկնել հաղորդումները առավոտյան և երեկոյան ժամերին: Բացի դրանից, ազգային փոքրամասնությունների խմբագրությունները իրենք ունեն հնարավորություն պատրաստել ռեպորտաժ իրենց համար հետաքրքիր թեմաներով, ինչը նրանք 2012 թվականին բազմիցս են իրականացրել:

### Հեռուստաընկերություն «Պիկ»

2012 թվականի հունվարից –հոկտեմբեր ներառյալ Վրաստանի հանրային հառարձակման 3-րդ ռուսալեզու ալիքի «Պիկի» միջոցով տարածվում էր ազգային փոքրամասնություններին հատկացված հեռուստատարադրանքը: Հեռուստաընկերությունը պայմանագիր կնքեց Սամցխե-Ջավախեթի հեռուստակայանների հետ (Ախալքալաքի «ATV12»-ի, Նինոծմինդայի «Փարվանա», Ախալցխի «9-րդ ալիք») նրանց հաճախականությունների վրա «Պիկ»-ի երեկոյան եթերը միացնելու կապակցությամբ: «Պիկ»-ը եթերը ռետրանսլյացիայի համար վճարում էր նրանց գումար: Հատուկ ազգային փոքրամասնությունների համար շաբաթական 2-անգամ պատրաստվում էր հաղորդում «Տարածաշրջանային լուրեր» որը արտացոլում էր նրանց համար հետաքրքիր թեմաներ, տեղական լրագրողներին տրվեց հնարավորություն համագործակցելու «Պիկի» հետ մատուցել սեփական սյուժեները: Բացի դրանից Նինոծմինդայում, Մառնեուլիում և Գորիում «Պիկ»-ն ուներ նկարահանող խմբեր, որոնց տեխնիկական սարքավորանքը, մասնագիտական ակը և աշխատավարձը նույնպես ապահովվում էր սեփական բյուջեից: Չնայած այն բանին, որ նրանք տեղական հեռուստաընկերությունների աշխատակիցներն էին: «Պիկ»-ը իր առավոտյան եթերով նաև տարածում էր «Ազգային մոամբեն», որը նրան մատակարարվում էր 1-ալիքի ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումը:

«Պիկ»-ի փակումից հետո տարածաշրջանների հետ աշխատանքը այսպիսի ինտերակտիվային տեսանկյունից, ցավոք, դադարեց, ստեղծվեց ռուսալեզու ալիքի հաղորդման լուրջ դեֆիցիտ - «Պիկը» դիտում էին բոլոր փոքրամասնությունները և ոչ թե միայն մեկ ազգային խմբի ներկայացուցիչներ:

### Ռադիոհաղորդում

Ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդում ընթանում է «Առաջին Ռադիոյի» եթերով: Ներկայումս Վրաստանի հանրային հեռարձակման ռադիոէթերով հաղորդվում է «Ազգային «Մոամբեն»-ի նորությունների լրահավաքի աուդիոտարբերակը ազգային փոքրամասնությունների լեզուներով: Արխազական, օսական, ադրբեջանական և հայկական լեզուներով լրատվական թողարկումների հետ մեկտեղ շաբաթական մեկ անգամ պատրաստվում է նաև ռադիոծրագիր քրդական լեզվով:

### Թոք-շոու «Մեր բակը»

«Մեր բակը» թոք-շոուի ստեղծագործական խումբը 2012 թվականին պատրաստեց ընդամենը 50 հաղորդում, որոնց թեմատիկան բազմազան էր: Հիմնական շեշտը դրվում էր ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների և նրանց համար հրատապ հարցերի վրա, այդ թվում կրթության մատչելիություն, կանանց իրավունքներ, ոչկառավարական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության զարգացման մեջ և քաղաքացիական ինտեգրման գործընթացում, տարհանվածների իրավիճակը, գյուղատնտեսության զարգացման օժանդակումը: 2012 թվականին պատրաստվեց պլան, թե ինչ փոփոխություններ են մտցվելու հաղորդման ձևապատկերում, որպեսզի կատարվի այս նախագծի թարմացում 2013 թվականին:

### **Ռադիոհաղորդում «Մեր Վրաստանը»**

«Մեր Վրաստանը» ռադիոհաղորդումը կողմնորոշված է ազգային և կրոնական փոքրամասնությունների վրա, նրանց համար ռելեվանտային սոցիալական, տնտեսական, մշակութային, լուսավորչական հիմնադրույթների վրա: Հաղորդումը ազգային փոքրամասնություններին հնարավորություն է տալիս մեղիատարածքում ունկնդրի առջև արտահայտեն իրենց կարծիքները այս կամ այն երևույթի և հիմնախնդրի մասին, կատարեն մեկնաբանություններ երկրի համար կարևոր ընդհանուր հարցերի շուրջ: Հաղորդման տևողությունը 45-րոպե է. պարբերականությունը՝ շաբաթական մեկ անգամ (հինգշաբթի օրերը): Նախագիծն իրականացնում է Ժողովրդավարության և քաղաքացիական ինտեգրման կենտրոնի» հիմնադրամը «Բաց հասարակություն-Վրաստան»-ի աջակցությամբ:

### **2012 թվականին ազգային փոքրամասնությունների լեզուներով ընդհանուր եթերային արտադրանքի վիճակագրություն.**

Հաղորդումների ձևաչափը	Անվանումը	Տևողությունը րոպեներով	Թվաքանակը	Գումարը, Ժամերով
Հեռուստատեսային լրատվական	Ազգային «Մոմբե»	45	255	191
Ռադիո լրատվական	Ազգային «Մոմբե»	45	255	191
Հեռուստատեսային թոք-շոու	«Մեր բակը»	45	50	38
Ռադիո թոք շոու	Մեր Վրաստանը	32	45	24
Ռադիո լրատվական	Քրդական	30	52	26
Ընդհանուր առմամբ, տարեկան, ժամ				470

### **Տպագիր մեդիա**

2012 թվականին Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության «Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում էր հայալեզու «Վրաստան» լրագիրը և ադրբեջանալեզու «Գյուրջիստանը» լրագիրը:

### **Հայերեն «Վրաստան» թերթ**

Տարվա ընթացքում լույս է տեսնում «Վրաստան» լրագրի 52 համար (այստեղից Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարության աջակցությամբ՝ 17 համար), մեկ համարի տպաքանակը 3000 օրինակ է: Լրագրերը տարածվում են Թբիլիսիում և Բաթումում, ինչպես նաև

**Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն**

Նինոծմինդայի, Ախալքալաքի, Ախալցխիսեի, Բոլնիսի, Ասպինձայի, Մառնեուլի, Բորջոմի մունիցիպալիտետներում: Լրագրի 70% քաղաքական բնույթի է, իսկ 30% պարունակում է լրատվություն ազգային փոքրամասնությունների մշակութային-սոցիալական իրավիճակի մասին:

***Աղբրեջաներեն լրագիր «Գյուրջիստան»***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ նույնպես շարունակվում է «Գյուրջիստան» լրագրի հրատարակությունը: Տարեկան լույս է տեսնում 52 համար (այստեղից, նախարարության աջակցությամբ՝ 17 համար), մեկ համարի տպաքանակը 3000 օրինակ է: Լրագրերը տարածվում են Թբիլիսիում և Ռուսթավում, ինչպես նաև Գարդաբանի, Մառնեուլիի, Բոլնիսի, Թեթրիձղարոյի, Լագոդեխի, Գուրջաանի և այլ մունիցիպալիտետներում: Լրագրի 70% լուսաբանում է համայնքային հարցեր, տեղեկատվությունը ազգային փոքրամասնությունների սոցիալ-մշակութային կյանքի մասին:

## IV. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն

Ազգային փոքրամասնությունների հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ ընգրկումը նշանակալիորեն կախված է պետական լեզվի իմացությունից: Այս տեսակետից Վրաստանի կառավարությունը, բացի կրթական ծրագրերից, անց է կացնում տարբեր միջոցառումներ ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովման և որոշման ընդունման գործընթացին մասնակցությունը բարելավելու համար: Այս ուղղությամբ ընթացիկ տարվա ընթացքում հատկանշական է ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների բնակիչների ակտիվ մասնակցությունը Վրաստանի խորհրդարանի ընտրություններին:

### **Վրաստանի խորհրդարանի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի ընտրություններ**

Նախընտրական գործունեությունը մինչև ընտրությունների պաշտոնական նշանակումը ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացների պարզեցման և օժանդակության նպատակով պլանավորվեցին և իրականացվեցին հետևյալ ակտիվությունները.

### **Աշխատանքային խմբի ստեղծում**

2012 թվականի մայիսին ԿԸՀ-ի նախագահի հրամանով ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացների պարզեցման և աջակցության նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ: Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ազգային փոքրամասնությունների հարցերով աշխատող աշխատանքային խմբի ստեղծման նպատակը ներկայացնում էր ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկումը ընտրական ընթացակարգերի կապակցությամբ: Սահմանվեցին աշխատանքային խմբի գործառույթները.

- 2012 թվականի Գործնական պլանի մշակում,
- Գործնական պլանի մոնիտորինգ,
- Պլանավորված և իրականացված նախագծերի վերլուծություն,
- Կլոր սեղանների կազմակերպում Թբիլիսում և տարածաշրջաններում,
- 2013-14 թթ. Գործնական պլանի մշակում:

### **Աշխատանքային խմբին մասնակցում էին հետևյալ կազմակերպությունները.**

Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմը,  
 Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES),  
 Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (UNDP),  
 Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան (UNAG),  
 Վրաստանում Եվրամիության ներկայացուցչությունը,  
 Եվրասիական համագործակցության հիմնադրամը,



Քաղաքացիական զարգացման գործակալությունը (CIDA),  
 Ադրբեջանցի կանանց միությունը (UAWG),  
 Ժողովրդավար մեսիսթեջիների միությունը,  
 Կոալիցիա «Քաղաքացիական զարգացման համար»,  
 Քաղաքացիական ինտեգրման հիմնադրամ,  
 Համընդհանուր քաղաքացիական շարժում (Բազմազգ Վրաստան),  
 Ախալցխի երիտասարդական կենտրոն,  
 «Քաղաքացիական կրթության զարգացման մուլտիթեմիկական ռեսուրսկենտրոն) հիմնադրամ,  
 Փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոն,  
 Վրաստանի հանրային հեռարձակում,  
 Ռադիո «Իմեդի»,  
 Ադրբեջանա-վրացական մշակութային կենտրոն «Վարլիզ»,  
 ՀԻԻԴ «Ընտրական համակարգերի, արգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոն»:

Ազգային փոքրամասնությունների հարցով աշխատող աշխատանքային խմբի կողմից մշակվեց 2012 թվականի Գործնական պլան: Գործնական պլանով սահմանվեցին հետևյալ խնդիրները.

- Ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովում,
- Երիտասարդ ընտրողների իրազեկում և ընտրական գործընթացներին ընդգրկվածություն,
- Կին ընտրողների իրազեկում և ընտրական գործընթացներին ընդգրկվածություն,
- Սահմանափակ կարողություններով ազգային փոքրամասնությունների ընտրողների ընտրական գործընթացներին ընդգրկվածություն և օժանդակություն,
- Ազգային փոքրամասնությունների լեզուներով ընտրական փաստաթղթերի թարգմանություն,
- Ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկում մեդիայի միջոցով:

Աշխատանքային խմբի կողմից սահմանվեցին այն գործունեությունը, որոնք նպաստելու են առաջադրված նպատակների իրականացմանը: Մասնավորապես, աշխատանքային խմբի կողմից մանրամասնորեն ձևակերպվեցին հետևյալ ակտիվությունները.

#### ***Երիտասարդության համար.***

- Մեմինարների և վարժանքների վարում (ընտրական ընթացակարգերի ուսուցում),
- Քվեարկության օրվա բեմականացման կազմակերպում,
- Երիտասարդների մասնակցությամբ բնակչության իրազեկում – բուկլետների և ֆլայերների տարածում,
- Կենտրոնական ընտրական հանձնաժողով երիտասարդների այցելություն:

#### ***Կին ընտրողների համար.***

- Մեմինարների վարում տեղական կին կիդերների հետ (ընտրական ընթացակարգերի մասին),
- Նրանց մասնակցությամբ բնակչության իրազեկում – բուկլետների/ֆլայերների տարածում:

#### ***Սահմանափակ կարողություններով ազգային փոքրամասնության ընտրողների համար.***

- Սահմանափակ կարողություններով անձանց կարիքների սահմանում,

### կատարման հաշվետվություն

- Գովազդային երիզների սուրդոթարգմանության (ժեստային լեզու) ապահովում,
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար հրահանգի մշակում սահմանափակ կարողություններով ընտրողներին քվեարկության տեղամասում բուժելու մասին,
- Ընտրական տեղամասերի հարմարեցում, ժամանակավոր թեքահարթակների սարքավորում:

### ***Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի միջև փոխհամագործակցության մեմորանդումի ձևակերպում***

2012 թվականի հունիսի 7-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և ժողովրդական պաշտպանի (ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի) միջև ձևակերպվեց փոխհամագործակցության մեմորանդում: Կողմերը համաձայնեցին օժանդակել էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման գործընթացին: Բացի դրանից, մշակվեց ընդհանուր պլան, որը սահմանեց համագործակցության և գործունեության այն ոլորտները, որոնք կնպաստեն ընտրական միջավայրի բարելավմանը և կմեծացնի հասարակության վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ:

Քաղաքացիական ինտեգրման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երկարատև գործընթաց է, մեմորանդումը դիտվում է որպես բազմամյա համագործակցության հիմք: Կողմերի միջև ազգային փոքրամասնությունների հետ կապված միասնական գործունեությունը իրականացվում է խորհրդատվությունների, բանավեճերի, տեղեկատվության փոխանակման, սեմինարների և կոնֆերանսների տեսքով:

### ***Ազգային փոքրամասնությունների հարցերով աշխատող աշխատանքային խմբի հանդիպումներ***

2012 թվականի մայիսի 17-ին աշխատանքային խումբը անցկացրեց առաջին հանդիպումը, որտեղ քննարկվեց աշխատանքային խմբի գործառույթները և ապագայի պլանները: 2012 թվականի հունիսի 5-ին աշխատանքային խմբի անդամները անցկացրեցին հերթական հանդիպումը: Հանդիպմանը որոշվեցին թիրախային խմբերը և մշակվեց 2012 թվականի գործնական պլանը: 2012 թվականի հուլիսի 4-ի հանդիպմանը կողմերը քննարկեցին հետևյալ հարցերը.

- Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում իրականացվելիք միջոցառումներ,
- Ընտրողների իրազեկում լրատվամիջոցներով:

Աշխատանքային խումբը արտագնա հանդիպումներ անցկացրեց Մառնեուլիում, Թելավի շրջանի Ղարաջալա գյուղում և Ախալքալաքում: Աշխատանքային խմբի անդամները տեղական ոչկառավարական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և մեդիայի ներկայացուցիչներին ծանոթացրեցի՝ 2012 թվականի խորհրդարանային ընտրություններին ազգային փոքրամասնություններին օժանդակության նպատակով պլանավորված միջոցառումներին:

### Ընտրական ժամանակաշրջան ընտրությունները պաշտոնապես նշանակելուց հետո

**Ոչկառավարական կազմակերպությունների հետ համագործակցություն:** 2012 թվականի օգոստոսին ԿԸՀ-ին առընթեր գործող ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը ազգային փոքրամասնությունների ընտրական գործընթացներին ինտեգրմանը օժանդակելու նպատակով հայտարարեց դրամաշնորհային մրցույթ: Դրամաշնորհային մրցույթի նպատակն էր այն նախագծերի հայտնաբերումը, որոնց իրականացումը առավելագույնս օժանդակելու էր ընտրական գործընթացների նկատմամբ սոցիալական տրամադրության բարելավմանը և ընթացիկ ընտրական տարում ընտրազանգվածի ակտիվության աճ, ընտրողների կողմից մտածվա ընտրության կատարում և այս ուղղությամբ տարբեր ձևաչափի տեղեկատվական կամպանիաների անցկացում/կազմակերպում: Դրամաշնորհային հանձնաժողովի կողմից ընտրական գործընթացում ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը օժանդակելու նպատակով ընտրվեց և ֆինանսավորվեց 10 ոչկառավարական կազմակերպություն, այդ թվում՝ աշխատանքային խմբին մասնակից հետևյալ ոչկառավարական կազմակերպությունները.

- Քաղաքացիական զարգացման գործակալություն(CIDA),
- Վրաստանի ադրբեջանցի կանանց միություն,
- Կոալիցիա քաղաքացիական զարգացման համարտ:

2012 թվականի խորհրդարանի ընտրությունների համար, Կենտրոնաան ընտրական հանձնաժողովի համակարգմամբ, ընտրական համակարգերի միջազգային ֆինանսադրամի (IFES) կողմից ֆինանսավորվեցին աշխատանքային խմբում մտնող հետևյալ ոչկառավարական կազմակերպությունները.

- «Բազմազգ Վրաստան»,
- Միջէթնոսային համագործակցության և խորհրդատվությունների վերլուծական կենտրոն:

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում բնակվող երիտասարդության կրթության և ընտրական գործընթացներին նրանց ակտիվ ընդգրկվածության նպատակով ֆինանսավորեց հետևյալ ոչկառավարական կազմակերպությունները.

- Քաղաքացիական ինտեգրման հիմնադրամ,
- «Ժողովրդավար մեսիսթեցիների միություն»:

### ***Ազգային փոքրամասնությունների հարցերով աշխատող աշխատանքային խմբի հանդիպումներ***

2012 թվականի օգոստոսի 20-ին անցկացված հանդիպմանը աշխատանքային խմբի անդամները զրուցեցին ԿԸՀ-ին առընթեր գործող ուսումնական կենտրոնի կողմից 2012 թվականին խորհրդարանի ընտրությունների համար ազգային փոքրամասնությունների ընտրողների լուսավորության և իրազեկման նպատակով տրված դրամաշնորհների, ինչպես նաև արտագնա հանդիպումների կազմակերպման շուրջ:

2012 թվականի սեպտեմբերի 5-ին ԿԸՀ-ն ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ միասին կազմակերպեց Վրաստանում լիազորագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ հանդիպում: Հանդիպմանը ԿԸՀ-ն դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին մատուցեց տեղեկատվություն ազգային փոքրամասնության ընտրողների ընտրական գործընթացների պարզեցման և օժանդակության նպատակով պլանավորված և իրականացված գործունեության մասին: Ինչպես նաև ոչկառավարական կազմակերպությունները դիվանագիտական կորպուսին մատուցեցին տեղեկատվություն 2012 թվականի խորհրդարանի ընտրությունների համար ազգային փոքրամասնությունների ուղղությամբ ֆինանսավորված նախագծերի մասին: Իրականացվեց ֆինանսավորված նախագծերի մոնիտորինգ Մառնեուլում, Ախալցխիսեում, Թելավում և Ղարաջալա գյուղում:

### **Ազգային փոքրամասնությունների լեզուներով թարգմանվա ընտրական փաստաթղթեր**

Վրաստանի խորհրդարանի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի ընտրությունների համար մշակված գործնական պլանի համաձայն, սահմանվել են տպագրվելիք և թարգմանվելիք ընտրական փաստաթղթերը:

2012 թվականի խորհրդարանի ընտրությունների համար թարգմանվել են հետևյալ փաստաթղթերը.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց-հրահանգը (վրացերեն-ռուսերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն-ռուսերեն լեզուներով),
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հուշաթերթ հրահանգը (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն լեզուներով),
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հուշաթերթ հրահանգը (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն լեզուներով)
- Ընտրողների հուշաթերթ/ֆլայեր (վրացերեն-ադրբեջաներեն և վրացերեն-հայերեն լեզուներով),
- Համընդհանուր ընտրացուցակում գոյություն ունեցող ազգային փոքրամասնության ընտրողների տվյալները,
- Տեղամասային ընտրական հանձնաժողովում պատին փակցնելու քվեարկության շենքը և ընթացակարգերը արտացոլող պոստերներ (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով),
- Ընտրական քվեաթերթիկներ (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով),
- Համընդհանուր ընտրացուցակ, ընտրական հանձնաժողովին հատկացված տարբերակ (Սեդանի ցուցակ, (վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով),
- Քվեաթերթիկը լրացնելու կարգը և հայերեն և ադրբեջաներեն լեզուներով):

Ընտրական փաստաթղթերը թարգմանվում են Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) կողմից, ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) ֆինանսական աջակցությամբ:

ՀԻԻԴ «Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների ( ուսուցման կենտրոնի» կողմից ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ (UNDP) գործընկերությամբ «Վստահելի և կայուն ընտրական

### կատարման հաշվետվություն

ինստիտուտների և գործընթացների ամրապնդում» նախագծի շրջանակներում տպագրվեցին ազգային փոքրամասնությունների լեզուներով թարգմանված փաստաթղթերը:

Տեղական ոչկառավարական կազմակերպություններին իրազեկելու նպատակով դեպարտամենտի կողմից մշակվեց բրոշյուր «Ազգային փոքրամասնությունների ընտրողներին հավասար ընտրական միջավայրի ստեղծում» թեմայով, որը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

#### ***Ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկում***

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատվերով հանրաձյին հեռարձակումը 2012 թվականի օգոստոսի 12-ից թարգմանում և ամեն օր էլերում տեղադրում էր «Ընտրական հեռուստատեսային դայջեստը» հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, որոնց տևողությունը 6-ական րոպե էր:

Վրաստանի հանրային հեռարձակման եթերում պտտվում էին «Ազգային մոամբե», «Ընտրական հեռուստատեսային դայջեստ» և ԿԸՀ-ի գովազդային երիզները (սուրդոթարգմանության ուղեկցությամբ)։

- 07:00 ժամ – Վրաստանի հանրային հեռարձակման առաջին ալիքի եթերում – հայերեն և ադրբեջաներեն լեզուներով,
- 07:00 ժամ – Վրաստանի հանրային հեռարձակման 3-րդ ալիքի եթերում (ՓԻԿ) – հայերեն,
- 24:00 ժամ – Վրաստանի հանրային հեռարձակման 2-րդ ալիքի եթերում – հայերեն և ադրբեջաներեն լեզուներով,
- 22:00 ժամ – Մառնեուլը հեռուստարձակություն «Մառնեուլի TV»-ի էլերում – ադրբեջաներեն լեզվով,
- 23:00 ժամ – Բոլնիսի հեռուստարձակություն «Բոլնիսի»-ի եթերում – ադրբեջաներեն լեզվով,
- 07:00 ժամ – Ախալցխի հեռուստարձակություն «9-րդ ալիքի» եթերում – հայերեն լեզվով,
- 07:00 ժամ – Ախալքալաքի հեռուստարձակության «ATV 12»-ի եթերում – հայերեն լեզվով,
- 07:00 ժամ – Նինոծմինդայի հեռուստարձակություն «Փարվանա»-ի եթերում – հայերեն լեզվով,
- 07:00 ժամ – Վրաստանի հանրային հեռարձակման առաջին ռադիոյի եթերում – հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Նաև Վրաստանի հանրային հեռարձակման եթերում որակյալ սուբյեկտների միջև խորհրդարանի ընտրությունների կապակցությամբ երկու անգամ կայացավ հեռուստատեսային բանավեճ, որոնք թարգմանվեցին և լուսաբանվեցին տարածաշրջանային հեռուստատրությունների եթերում: ԿԸՀ-ի կայք-էջում տեղադրվեց բաներ (Ազգային փոքրամասնություններ», որտեղ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով մատչելի էր հետևյալ կարգի տեղեկատվություն.

- Ընտրական փաստաթղթեր և ԿԸՀ-ի գովազդային երիզներ, որոնք թարգմանվեցին 2012 թվականի խորհրդարանի ընտրությունների համար:

**Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2012 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն**

Ազգային փոքրամասնությունների ընտրողներին հավասար ընտրական միջավայր ստեղծելու նպատակով ԿԸՀ-ի կայք-էջում Համընդհանուր ընտրացուցակում հայ և ազդբեջանցի ազգության քաղաքացիների համար սեփական տվյալները վերստուգելը մատչելի էր նրանց հասկանալի լեզուներով և վրացերեն-հայերեն, վրացերեն-ադրբեջաներեն):

***Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տեղամասերի թվաքանակը ըստ ընտրատարածքների***

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված ընտրողների հաշվառումով 12 ընտրատարածքի ընտրական հանձնաժողովում ստեղծվեց 337 ընտրական տեղամաս:

№ 11 Սագարեջո (Իոթմուղալո )	.12 տեղամաս
№15 Լագոդեխի (Կաբալի)	.6 տեղամաս
№17 Թելավի (Ղարաջալա)	.4 տեղամաս
№21 Գարդաբանի	. 32 տեղամաս
№22 Մառնեուլի	. 81 տեղամաս
№ 23 Բոլնիսի	. 42 տեղամաս
№24 Դմանիսի	. 32 տեղամաս
№ 25 Ծալկա	. 16 տեղամաս
№ 26 Թեթրիձղարո	. 5 տեղամաս
№ 37 Ախալցխիսե	. 8 տեղամաս
№40 Ախալքալաքի	. 63 տեղամաս
№ 41 Նինոծմինդա	. 36 տեղամաս

**Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ազգային/գենդերային կազմը**

Վրաստանի խորհրդարանի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի ընտրությունների համար Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների թվաքանակը (ընտրական ժամանակաշրջան) կազմեց **964**, այդ թվում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ էր հանձնաժողովի **22** անդամ:


Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամ ազգային/գենդերային կազմը.

Պաշտոնը	Կին	Տղամարդ
Նախագահ	1	1
Քարտուղար	1	0
Անդամ	8	11
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>12</b>


**Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրված/նշանակված ծագումով ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի անդամների թվաքանակը**

Վրաստանի խորհրդարանի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի ընտրությունների համար տեղամասային ընտրական հանձնաժողովներում ազգային փոքրամասնությունների ծագումով հանձնաժողովի անդամների թվաքանակը ընդհանուր առմամբ կազմեց **2774** անդամ:

**Ազգությամբ ադրբեջանցի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ – ընդամենը 1241**




**Ազգությամբ հայ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ – ընդամենը 1533**



Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ծագումով ազգային փոքրամասնությունների, հանձնաժողովի անդամների գենդերային կազմը ըստ ընտրատարածքների

Կին – հանձնաժողովի 757 անդամ,

Տղամարդ – հանձնաժողովի 2017 անդամ:





## կատարման հաշվետվություն

**«Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ հարաբերությունների Վրաստանի պետական ռազմավարության փաստաթղթի» քննարկումը կովկասցի ուսանողների հետ**

Հուլիսի 11-ին Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանի փոքր կոնֆերանսների դահլիճում Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ անցկացվեց հանդիպում կովկասցի ուսանողների հետ: Բանաձևի ձևաչափով քննարկվեց «Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ հարաբերությունների Վրաստանի պետական ռազմավարության» փաստաթուղթը և հյուսիսային կովկասցիների համար այցեհրավիրային ռեժիմի պարզեցման արդյունքները: Ռազմավարության նպատակն է վրացի և հյուսիսկովկասյան ժողովուրդների շրջանում մշակութի, կրթության, գիտության, կոմերցիայի, առևտրի, մարդկային կապերի և այլ մարդասիրական ոլորտներում առկա կապերի հաստատում և ամրապնդում, ինչը, իր հերթին, պատմական բարեկամության և մշակութային հարաբերությունների վերականգնման/հաստատման նախապայմանն է:

Միջոցառմանը մասնակցում էին Վրաստանի կառավարության ներկայացուցիչներ, փորձագետներ Կիվկասի հարցերում, լեզվաբաններ, Թբիլիսիի տարներ բարձրագույն հաստատությունների ուսանողներ, մագիստրանտներ և այն Հյուսիսկովկասյան ուսանողները, ովքեր Վրաստանում ստանում են բարձրագույն կրթություն: Հանդիպման հիմնական նպատակն էր «Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ հարաբերությունների Վրաստանի պետական ռազմավարության» մասին տեղեկատվության փոխանակումը, Վրաստանի և Հյուսիսկովկասցի երիտասարդության շրջանում կապերի հաստատման աջակցությունը, ինչը առաջացրեց Վրաստանի կողմից Հյուսիսային կովկասցիների համար այցեհրավիրային ռեժիմի պարզեցումը:

**Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի և պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր**

Մարտի 1-ին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի առաջին տեղակալի նախագահությամբ անցկացվեց պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստ: «Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման գործնական պլանի իրականացման նպատակով ստեղծված Պետական միջգերատեսչական հանձնաժողովի» նպատակն էր 2011 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվության ավարտված տարբերակի քննարկում/հաստատումը և 2012 թվականի գործնական պլանի գերակայությունների և մոտեցումների որոշումը:

**Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի և պետական միջգերատեսչական հանձնաժողովի արտագնա նիստերը Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում**

Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և ECMI-I ֆինանսական աջակցությամբ 2012 թվականի հուլիսի 17-20-ին միջգերատեսչական հանձնաժողովի արտագնա նիստեր տեղի ունեցան Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում, Գարդաբանում և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում, Նինոծմինդայում: Նիստի աշխատանքներին

### կատարման հաշվետվություն

մասնակցում էին Վրաստանի կրթության և գիտության նախարարության, ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի, Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության, Վրաստանի սպորտի և երիտասարդության գործերով նախարարությունների և Վրաստանի հանրային հեռարձակման ներկայացուցիչները: Հանդիպմանը ներկա էին Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանների մունիցիպալիտետների, տեղական ինքնակառավարման և երկրամասային վարչության ներկայացուցիչներ/աշխատակիցներ: Հանդիպման հիմնական նպատակն էր միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքի մասին տեղեկատվության փոխանակում, ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման աջակցություն, որոշումներ ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում, տեղում առկա հիմնախնդիրների ավելի լավ ուսումնասիրում և համապատասխան իրավասու պետական հիմնարկությունների միջոցով դրանց արձագանքում: Հանդիպման բոլոր մասնակիցներին պետական նախարարի աշխատակազմը փոխանցեց երկրի Սահմանադրության նոր հրատարակությունը «Վրաստանի Սահմանադրություն» կողմից իրացված տեքստով, թարգմանված աղբյուրներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով և «Համառոր բացատրական բառարան. 365 տերմին պետական կառավարման, իրավունքի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում»:

### ***Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի և պետական միջգերատեսչական հանձնաժողովի արտագնա նիստ Գրիգուլեթ ավանում***

Հուլիսի 26-29-ին Գուրիայում, Գրիգուլեթի ավանում, կայացավ հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման պետական միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը և վարժանք: Հանձնաժողովի արտագնա նիստը կայացավ փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնի (ECMI-ի) ֆինանսական աջակցությամբ և հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման 2012 թվականի գործնական պլանի շրջանակներում: Նիստի աշխատանքին մասնակցում էին Վրաստանի կրթության և գիտության նախարարության, Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության, Վրաստանի ներքին գործերի նախարարության, ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի և Վրաստանի հանրային հեռարձակման ներկայացուցիչները: ECMI-ի կողմից հրավիրված լեհ փորձագետը միջգերատեսչական հանձնաժողովի անդամների համար անցկացրեց վարժանք թեմայով. «Փոքրամասնությունների հարցերի կառավարման լավագույն եվրոպական պրակտիկան պետական կառավարման մակարդակով»:

***Վրաստանի վերինտեգրման հարցերով նորանշանակ պետական նախարարի և նրա տեղակալի հանդիպումը պետական միջգերատեսչական հանձնաժողովի հետ***

Դեկտեմբերի 27-ին կառավարության գրասենյակում կայացավ հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի իրականացման նպատակով ստեղծված պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովը նոր կառավարության ստեղծումից հետո առաջին անգամ հավաքվեց: Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարար Պաստա Ջաքարեիշվիլին և պետական նախարարի առաջին տեղակալ Քեթևան Ցիխելաշվիլին: Հանդիպմանը ուշադրությունը կենտրոնացվեց ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում պետական լեզվի ուսուցման նշանակության վրա: Պետական նախարարի հայտարարությամբ, պետությունը ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին պետք է առաջարկի ոչ միայն պետական լեզվի ուսուցում, այլև ապագայում գիտելիքը կիրառելու հեռանկար: Նիստում հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի շրջանակներում քննարկվեցին իրականացվելիք և պլանավորված միջոցառումները: Զրույցը վերաբերեց ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տեղեկատվության մատչելիությանը, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրմանը, ինչպես նաև մշակույթի և ինքնագոյի պահպանման ուղղություններին: Հանձնաժողովի անդամները նիստին ներկայացրեցին տեղեկատվություն իրենց գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից անցկացված աշխատանքների մասին տեղեկատվություն:

***Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի և կոնստիտուցիոնալիզմի ուսումնասիրության տարածաշրջանային կենտրոնի ներկայացուցիչների հանդիպումը IX-X դասարանների աշակերտության հետ***

2012 թվականի դեկտեմբերի 12-ին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի մասնակցությամբ և կոնստիտուցիոնալիզմի ուսումնասիրության կենտրոնի կազմակերպմամբ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Գարդաբանի № հանրային դպրոցի, Գարդաբանի մունիցիպալիտետի, Ղարաջալի և Քեսալո գյուղերի հանրային դպրոցների IX-X դասարանների աշակերտների հետ անցկացվեց տեղեկատվական բնույթի միջոցառում՝ Վրաստանի նոր պատանեկական Սահմանադրության շնորհանդեսը: Նշված հանդիպմանը բաժանակցից երկլեզու, ադրբեջաներեն լեզվով թարգմանված «Պատանեկան պատկերազարդ Վրաստանի Սահմանադրության» հրատարակությունը: Միջոցառման գլխավոր նպատակը կայանում էր Քվեմո Քարթլիի տարածաշրջանի ադրբեջանալեզու դպրոցների աշակերտների գիտակցության և քաղաքացիական կրթության մակարդակի բարձրացումը, ինչը, իր հերթին քաղաքացիական ինտեգրման գործընթացի անբաժանելի մասն է:

***Միջոցառում: «Մեսիսթեթիկների այսօրվա օրը»***

Դեկտեմբերի 20-ին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի կազմակերպմամբ ազգային գրադարանի կոնֆերանսների դահլիճում կայացավ բանավեճ «Մեսիսթեթիկների այսօրվա օրը» թեմայով, որտեղ փորձագետները գրուցեցին այն հիմնախնդիրների մասին, որոնց առջև այսօր կանգնա են Վրաստանում վերաբնակված մեսիսթեթիկները, ովքեր չէին մասնակցում ծրագրին: Հանդիպման հիմնական նպատակն էր հասարակության և երիտասարդ սերնդի աճը այն հարցերի նկատմամբ, ինչը, իր հերթին, օժանդակում է նրանց համայնքի ինտեգրմանը վրաց հասարակությանը: Միջոցառմանը մասնակցում էին վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի աշխատակիցները, բավիրված փոր:ագետներ և տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանող-երիտասարդներ:

***Մանկական Մամանադրության վարժանք Բաթումում***

Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի և Սահմանադրության ուսումնասիրության կենտրոնի կազմակերպմամբ Բաթումում Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանների ներկայացուցիչների համար կայացավ մանկական սահմանադրության տասնօրյա վարժանք:

***Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի 2011 թվականի կատարման հաշվետվության քննարկումը և հաստատումը Վրաստանի կառավարության կողմից և 2012 թվականի գործնական պլանի մշակումը***

Վրաստանի կառավարությունը քննարկեց և հաստատեց հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի 2012 թվականի գործնական պլանը և 2011 թվականի կատարման հաշվետվությունը, որը թարգմանվեց չորս լեզուներով (ադրբեջաներեն, հայերեն, ռուսերեն և ամզլերեն) և փոխանցվեց Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին, նաև տարածվեց տարածաշրջանների մունիցիպալիտետներում, սակրեբուլոններում և ոչկառավարական կազմակերպություններում: Անզլերեն տարբերակը փոխանցվեց դեսպանություններին և միջազգային կազմակերպություններին:

***Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի հանդիպումը ազգությամբ ադրբեջանցի ուսանողների հետ***

Դեկտեմբերի 26-ին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարար Պաստա Ջաքարեիշվիլին հանդիպեց ազգությամբ ադրբեջանցի ուսանողների հետ: Հանդիպումը կայացավ «Երիտասարդների զարգացման ակադեմիա» նախագծի շրջանակներում, որը իրականացնում է Մառնեուլի երիտասարդական կենտրոնը: Նախարարը ուսանողներին տեղեկատվություն հաղորդեց աշխատակազմի գործունեություն երկու ուղղությունների՝ հակամարտությունների կարգավորման և

### կատարման հաշվետվություն

ազգային և կրոնական փոքրամասնությունների ինտեգրման մասին պետական նախարարի նոր ռազմավարական մոտեցման և նախարարի աշխատակազմի կողմից պլանավորված ակտիվությունների մասին:

#### ***Երիտասարդական քաղաքացիական նախաձեռնությունների աջակցություն***

Նախագիծը նախատեսում էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների քաղաքացիական նախաձեռնությունների աջակցություն, խրախուսում, նրանց ընդգրկումը քաղաքացիական գործընթացներին, նրանց համար անհրաժեշտ ունակությունների և սովորությունների ձեռքբերումը և գործնական վարժանք-սեմինարները: Նախագծի հիմնական նպատակը ներկայացնում էր Քվեմո Քարթլիի տարածաշրջանում գոյություն ունեցող երիտասարդական աղբյուրների կազմակերպությունների և երիտասարդական նախաձեռնությունների զարգացման աջակցությունը և կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը: Նախագծի իրականացման ժամկետներն էին 2012 թվականի մարտի 12 –ից մինչև սեպտեմբերի 15-ը: Վարժանքներն ընթանում էին մեկ շաբաթվա ընթացքում և դրան մասնակցում էին 30 բենեֆիցիար: Նախագիծն իրականացավ նախարարության ենթակայության գերատեսչություն ՀԻԲԴ «Երեխաների և երիտասարդության զարգացման հիմնադրամի( և ա(ա)իպ «Վրաստանի աղբյուրների ուսանողների ասոցիացիայի» աջակցությամբ:

#### ***Ազգությամբ աղբյուրների ուսանողների էքսկուրսիան Գորիում***

Միջոցառումը նախատեսում էր 2012 թվականի օգոստոսի 22-ին Գորիում աղբյուրների երիտասարդության համար էքսկուրսիայի կազմակերպում, որտեղ մասնակիցներին հնարավորություն տրվեց, տեսնելու Գորիի տեսարժան վայրերը, էքսկուրսիայի շրջանակներում նրանք դիտեցին օկուպացիայի հետևանքով վնասված տարածքները: Միջոցառման նպատակն էր աղբյուրների ուսանողների և երիտասարդների իրազեկման աճը երկրում ընթացող երևույթների մասին, ինչպես նաև նրանց մոտիվացման ավելացումը և ընդգրկվածության ակտիվացումը քաղաքացիական գործընթացներում: Էքսկուրսիային մասնակցեց 150 ազգությամբ աղբյուրների ուսանող:

## V. Սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում

Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում իրականացվեց ենթակառուցյի վերականգնում և այլ զանգվածային տնտեսական նախագծեր: Այս ուղղությամբ հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային Հայեցակարգի և գործնական պլանի շրջանակներում Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման կառուցվածքների կողմից 2012 թվականին իրականացվեց տարածաշրջանի զարգացման ռազմավարության մշակում և դրանում բնակչության, այդ թվում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առավելագույն ընդգրկվածության ապահովում ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում, ենթակառուցյի վերականգնման ներդրումային նախագծերի մոնիտորինգ և դրանց իրականացման աջակցություն, ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում գյուղի աջակցության ծրագրի մշակում և մոնիտորինգ դրա իրականացմանը:

### ***Տարածաշրջանի զարգացման ռազմավարության մշակում***

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության կողմից պատրաստվեց տարածաշրջանի զարգացման ռազմավարության արդյունքների մեթոդական ձեռնարկ, այս ձեռնարկի համաձայն ներկայումս ընթանում է Վրաստանի բոլոր տարածաշրջանների զարգացման ռազմավարության մշակման գործընթաց:

Տարածաշրջանի զարգացման ռազմավարություն (հետագայում – ռազմավարություն) մշակվում է պետական լիազորի՝ նահանգապետի իրավասության սահմաններում մտնող ինքնակառավարման միավորների տերիտորիաների համաձայն:

Ռազմավարությունը ներկայացնում է քաղաքականության սահմանված փաստաթուղթ, որը արտացոլում է առկա իրավիճակը և այն մեխանիզմները, որոնց միջոցով էլ կատարվում է տարածաշրջանների զարգացման պոտենցիալ աջակցությունը: Ռազմավարության անբաժան մաս ներկայացնում է կոնկրետ նախագծերի գործնական ծրագրի, իրականացման ժամկետների, ծախսերի և ֆինանսավորման աղբյուրների (այդպիսինի գոյության դեպքում) որոշում: Ռազմավարության մշակման նպատակն է առանձին տարածաշրջանում գոյություն ունեցող պոտենցիալ սահմանումը և առաջարկությունների առաջարկումը հետևյալ արդյունքներին հասնելու համար.

- *Տարածաշրջանում գոյություն ունեցող բնական, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կիրառումը,*
- *Ներդրումների խրախուսում,*
- *Առանձին տարածաշրջանում ստեղծված բարդ իրավիճակի հաղթահարում և սոցիալ-տնտեսական զարգացման խթանում,*

### կատարման հաշվետվություն

- *Սոցիալական ենթակառուցյալի զարգացում,*
- *Շրջակա միջավայրի և բնապահպան հաշվեկշռի պահպանում, վերականգնում և պաշտպանություն:*

Ռազմավարության փաստաթղթի նպատակն է տեղեկատվության, ռեսուրսների և բոլոր շահագրգիռ կողմի ջանքերի կենտրոնացումը և տարածաշրջանների համար երկարաժամկետ, կայուն զարգացման գործում ուղղություն տալը: Ռազմավարությունը պետք է պարունակի բոլոր այն կենտրոնական, տարածաշրջանային և տեղական գերակայությունները, որոնք տարաջաշրջանի տերիտորիայում գոյությունն ունեն, ինչպես նաև այն ռեսուրսը, որը այս ուղղությամբ կլինի հատկացված: Համապատասխանաբար, ռազմավարական փաստաթուղթը կունենա իրատեսական պլանավորման, իրականացման և մոնիտորինգի կառույց:

Ռազմավարությունը պարունակում է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական և բնական շրջակա միջավայրի զարգացման խնդիրներ և գերակայություններ: Ռազմավարությունը կպատրաստեն տարածաշրջանային զարգացման խորհուրդ իդիսանության ներկայացուցիչների հետ, տեղական փորձագետների, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ:


Տարածաշրջանային զարգացման ռազմավարության մշակման գործընթացում կարևորագույնն է տրված տարածաշրջանի բնակչության ընդգրկվածության բարձր որակի ձեռքբերումը, որպեսզի նշված ռազմավարական փաստաթղթում առավելագույնս նախատեսված լինեն տեղական բնակչության հիմնախնդիրները, նրանց մոտեցումները և զարգացման գերակայությունները:

### ***Ներդրումային նախագծեր ենթակառուցյալի վերականգնման համար***

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ենթակառուցյալ վերականգնման համար անհրաժեշտ ներդրումային նախագծերի մոնիտորինգի և դրա իրականացման աջակցության տեսանկյունից 2012 թվականին իրականացվեցին հետևյալ աշխատանքները.


Քվեմո Քարթլիի պորտֆելի ամբողջական ծավալը կազմում է – 132,483,532 լարի

### Գերակայություններ





Մամցիւե-Ջավախեթի տարածաշրջանի պորտֆելի ամբողջական ծավալը կազմում է 113,932,355 լարի



**Կախերի տարածաշրջան, պորտֆելի ամբողջական ծավալը – 278, 962,329 լարի**



**Գյուղին աջակցության ծրագիր**

Նշանակալից աշխատանքներ են իրականացվել ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում:


**Ծրագրի հիմնական նպատակն է.**

- Ծրագրով նախատեսված գումարի վարում գյուղի առաջնահերթ սոցիալ-տնտեսական կարիքները ֆինանսավորելու համար (տեղական ենթակառուցյի օբյեկտներ, բարեկարգման, գյուղատնտեսական աշխատանքեր և այլն),
- Տեղական ինքնակառավարման իրականացման մեջ բնակչության ընդգրկվածության ուժեղացում և տեղական նշանակության հիմնախնդիրների վճռում անմիջականորեն բնակչության կողմից անվանված գերակայություններին համապատասխանաբար,
- Բնակչության և ինքնակառավարման մարմինների միջև փոխադարձ կաթերի ամրապնդում,
- Ինքնակառավարության անկախության որակի բարձրացում և ինքնակառավարվող միավորի տարածքային մարմնի ղեկավարի: ինքնակառավարող միավորի լիազորի (հետագայում լիազոր) իրավասությունների արդյունավետ իրականացում:  
Ծրագրով գյուղին հատկացված գումարի նպատակային լինելը կսահմանվի հետևյալ չափորոշիչներով.


- Իրականացվող ծրագրի (ծրագրերի) դրական սոցիալ-տնտեսական էֆեկտը պետք է արտացոլվի գյուղի բնակչության մեծամասնության վրա,
- Ծրագրի շրջանակներում գնված աշխատանքը, ապրանքը կամ սպասարկումը պետք է բարելավի գյուղի բնակչության մեծամասնության նյութական, կենցաղային, սոցիալ-տնտեսական իրավիճակը,
- Աշխատանքները կատարելու համար առավելագույնս պետք է զբաղված լինի համապատասխան գյուղի բնակչությունը,
- Ընդհանուր շահերի հաշվառումով թույլատրելի է մի քանի գյուղի համար հատկացված գումարի միավորում կամ գյուղերի ընդֆինանսուր հիմնախնդրի (օրինակ, խմելու կամ ոռոգման ջրի համակարգերը, գյուղատնտեսական տեխնիկան, բուժկետերը և այլն վճռելու համար,
- Կոնկրետ գյուղի նկատմամբ գումարի հատկացման նպատակայնությունը որոշվում է միայն բնակչության հետ նախնական խորհրդատվություններից հետո,
- Այս նպատակով լիազորը կազմակերպում է գյուղի ժողով: կազմակերպում է հանրային քննարկում և ժողովի մասնակիցների մեծամասնության որոշմամբ, գյուղին պատկանող գումարի չափի հաշվառումով կազմում է ծրագրով գյուղին հատկացված գումարի կիրառման նպատակահարմարությունը, ինչը արտացոլվում է բնակչության ժողովի արձանագրությունում

**Գյուղին աջակցության ծրագրի շրջանակներում իրականացված վերականգնման-ներդրումային նախագծեր**


**Քվեմո Քարթլի**



**Մամղիւե-Ձավախեթի**



**Կախեթի**



## կատարման հաշվետվություն

### *Առողջություն և սոցիալական պաշտպանություն*

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության 2011-2015 թթ. Առողջության ռազմավարության փաստաթուղթը հիմնվում է մի քանի հիմնական սկզբունքների վրա, որոնց շրջանում առանձնահատուկ նշանակություն է շնորհվում հավասար մատչելիությանը և պացիենտին կողմնորոշված առողջապահության համակարգի զարգացման աջակցությանը:

**Հավասար մատչելիությունը** ապահովում է բժշկական և սոցիալական սպասարկմանը հավասար մատչելիություն Վրաստանի բոլոր քաղաքացիների համար, չնայած նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակին, ծագմանը, կարգավիճակին և դավանանքին: Համապատասխանաբար, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից իրականացված առողջության և սոցիալական ապահովագրության պետական ծրագրերից հավասար իրավունքներով և մատչելիությամբ օգտվում է Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի:

**Փաթեթին կողմնորոշված առողջապահության համակարգը** հենվում է պացիենտի տեղեկացվածության, ազատ ընտրության հնարավորության, անվտանգության և սպասարկման ոչոսցիոնալ սպառողի պաշտպանության վրա:

Առողջապահության ոլորտում քաղաքացիների կողմից տեղեկացված որոշումների ընդունումը և սեփական իրավունքների իմացության հնարավորությունը ուղիղ կապվում է բժշկական հիմնարկությունների, ապահովագրական ընկերությունների և առողջապահության պետական ծրագրերի մասին տեղեկատվության հրապարակայնության հետ:

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից պլանավորված և իրականացված առողջապահական կամ սոցիալական ծրագրերը միատեսակ տարածվում են երկրի բոլոր քաղաքացիների վրա, չնայած նրանց ազգային, սոցիալական կամ կրոնական պատկանելությանը: Թերևս բժշկական և սոցիալական սպասարկումների պետական երաշխիքներից օգտվելու մատչելիությունը ուղիղ համամասնականորեն կախված է տեղեկատվական պատենշների հետ: Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների որոշակի մասին լեզվական խնդիր է դրսևորվում, ինչը առանձնապես երևում է հոծ բնակեցված տարածաշրջաններում և առավելապես միջին տարիքի և տարեց բնակչության հիմնախնդիր է հանդիսանում: Բնակչության նշված մասը գրկված է հնարավորությունից ընթերցելու կամ հասկանալու տարներ տեղեկատվական միջոցներով տարածված տեղեկատվությունը/գովազդը պլանավորված պետական ծրագրերի մասին, ժամանակին ստանալու տեղեկատվություն տարբեր պետական ծրագրերի շրջանակներում իրականացված փոփոխությունների մասին, ինչը միանշանակ խանգարում է բնակչությանը ժամանակին օգտվելու սերվիսներից, որոնք առաջարկում է պետությունը: Այդպիսով նախարարության կողմից իրականացված նախագծերի շրջանակներում պլանավորվեց տեղեկատվական գործընթաց հաղորդակցության տարբեր բաղադրիչի կիրառմամբ ոչվրացալեզու բնակչության համար և նրանց տեղեկատվություն հաղորդել մայրենի լեզվով:

***Նախագիծ՝ ազգային փոքրամասնությունների իրազեկում առողջապահության ոլորտում քաղաքացիների իրավունքների և պետության կողմից ֆինանսավորված բժշկական սպասարկման մասին***

Պետական ապահովագրական ծրագրի շրջանակներում նախատեսված բժշկական սպասարկման ծավալի և սերվիսների մասին բնակչության իրազեկում նպատակով պլանավորվեց տեղեկատվական բաների մշակում: Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական ապահովագրության նախարարի հրամանով (N01- 216 23.04.2012.) հաստատվեց նշված տեղեկատվական բաների դիզայնը և տեքստի բովանդակությունը: Նախարարի հրամանով բաների տպագրությունը և դրա տեղադրումը աչքի ընկնող տեղում հանձնարարվեց բժշկական գործունեության վկայագիր ունեցող բոլոր բժշկական հիմնարկություններին, որոնք մասնակցում են պետական և մունիցիպալային ապահովագրական ծրագրերի իրականացմանը: Հրամանի համաձայն, ապահովագրական ծրագրից օգտվող բենիֆիցիարների համար բաների վրա տեղադրվեց տեղեկատվություն առողջապահության ապահովագրական պոլիսի սերվիսների լրիվ ծավալի մասին՝ *ამბულატორიული მომსახურება*

- Ամբուլատորային սպասարկում
- անհետաձգելի ամբուլատորային սպասարկում
- ստացիոնարային սպասարկում (հոսպիտալացում)
- դեղորայք
- սերվիսների ցանկը, որոնք չեն վարձատրվում ապահովագրական պոլիսով
- մեդիացիայի ծառայության պեժ գծի համարը:

Բաների տեքստի բովանդակությունը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում տեղադրված բժշկական հիմնարկությունների ղեկավարներին հանձնարարվեց բաների տեղադրում բենիֆիցիարների համար աչքի ընկնող տեղում ադրբեջանալեզու բնակչության բնակեցված շրջաններում: Բաները վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով է, իսկ հայալեզու բնակչության բնակեցված շրջաններում՝ բաները վրացերեն և հայերեն լեզուներով է: Նախագծի շրջանակներում պլանավորվեց և անցկացվեց տեղեկատվական հանդիպումներ Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի բժշկական հիմնարկության աշխատակիցների հետ, ինքնակառավարության և բնակչության հետ: Մառնեուլիում, Դմանիսում, Բոլնիսում, Ծալկայում, Ախալքալաքում և ԱՍխալցիխեում բուժանձնակազմի հետ անցկացվեցին հանդիպումներ աայնպիսի կարևոր թեմաների շուրջ, ինչպիսիք են.

- «Առողջապահության պետական ծրագրով և բժշկական ապահովագրությամբ օգտվելու մատչելիության աջակցություն»,
- «Քաղաքացիների իրազեկում պետական ծրագրերի շրջանակներում նախատեսված բժշկական սերվիսների մասին»,
- Պացիենտի իրավունքների պաշտպանություն՝ «Իրազեկվածության համաձայնություն»:

Բնակչությունը հնարավորություն ուներ, զրուցել Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատակիցների հետ իրենց հետաքրքրող հարցերի շուրջ, որոնք բժշկական սերվիսներով վերաբերում են ոգտվելուն: Իր հերթին Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության ներկայացուցիչները հնարավորություն ունեին լսելու բնակչությունից տարբեր հիմնադրույթաձյին հարց և պատասխաններ

### կատարման հաշվետվություն

տալ առաջադրված հարցերին: Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ միասին հանդիպումներին մասնակցում էր նախարարը:

Նախագծի համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումն է՝ հասարակության հետ հարաբերությունների դեպարտամենտը, առողջապահության դեպարտամենտը: Նախագծի շրջանակներում անցկացվեց 6 հանդիպում ազգային փոքրամասնությունների, բժշկական հիմնարկությունների հետ, բժշկական հիմնարկությունների թվաքանակը, որտեղ տեղադրվելու է տեղեկատվական բաները, երկրի զանգվածով 150 միավոր է: Աճել է ազգային փոքրամասնությունների տեղեկացվածության մակարդակը պետական ապահովագրական ծրագրերով սահմանված բժշկական սպասարկման ծավալի մասին, ապահովագրության պոլիսով սահմանված պետական երաշխիքների և պոլիսից օգտվող անձանց իրավունքների վերաբերյալ: Ավելացել է քաղաքացիների ընդգրկվածությունը և մասնակցությունը առողջության պետական ծրագրերին:

### ***Ծրագիր՝ Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մշտական իրազեկում առողջապահության և սոցիալական ոլորտում ընթացող բարեփոխումների մասին***

Վրաստանում ազգային փոքրամասնությունների ինտեգրման գործընթացում Վրաստանիի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունը մեծ ուշադրություն է հատկացնում քաղաքացիների մշտական իրազեկմանը ընթացիկ բարեփոխումների մասին, ինչը, իր հերթին, մեծ նշանակություն ունի բարեփոխումները հաջողությամբ իրականացնելու համար: Այս նախագծի հիմնական նպատակն էլ է բնակչությանը լրատվության հաղորդումը պետակլական ապահովագրության նոր փուլի մասին: 2012 թվականի սեպտեմբերի 1-ից գործեց մինչև 6 տարեկան հասակի երեխաների, թոշակառու հասակի քաղաքացիներին, ուսանողների, սահմանափակ կարողություններով երեխաների և հստակ արտահայտված սահմանափակ կարողություններով անձանց բժշկական ապահովագրության ծրագիր: Նախագծի շրջանակներում պատրաստվեց և անցկացվեց արտագնա տեղեկատվական հանդիպումներ ոչվրացալեզու քաղաքացիներով հոծ բնակեցված տարածաշրջաններում, որոնց մասնակցում էին նախարարը, փոխնախագահը, նախարարության և տարածաշրջանային ներկայացուցիչներ:

### **Ընդհանուր առմամբ տեղի ունեցավ 9 հանդիպում.**

2 հանդիպում՝ Քվեմո Քարթլիի ադրբեջանալեզու բնակչության հետ

1 հանդիպում՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանային հեռուստատեսությունների ներկայացուցիչների հետ

2 հանդիպում՝ Սամցխե-Ջավախեթիի հայալեզու բնակչության հետ

1 հանդիպում՝ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանային հեռուստատեսության ներկայացուցիչների հետ

2 հանդիպում՝ Կախեթի ադրբեջանալեզու բնակչության հետ

## կատարման հաշվետվություն

1 հանդիպում՝ տարածաշրջանային հեռուստատեսության ներկայացուցիչների հետ:

Հանդիպման կազմակերպման գործին ակտիվորեն մասնակցում էին սոցիալական գործակալության տարածաշրջանային մասնաճյուղերի ներկայացուցիչները և սոցիալական աշխատակիցները:

Հանդիպմանը ներկա հասարակության համար արվեցին շնորհանդեսներ և նրանք վերաբերեցին այնպիսի կարևոր հարցերին, ինչպիսիք են.

- Ի՞նչ է բնակչության առողջության ապահովագրության պետական ծրագրի էությունը:
- Ու՞մ է սպասարկում բնակչության առողջապահության ապահովագրության պետական ծրագիրը:
- Բենեֆիցիարները, ովքեր կօգտվեն պետական ապահովագրության 2012 թվականի սեպտեմբերի 1-ից,
- Բժշկական ապահովագրության պոլիս տալու կարգը,
- Ինչպե՞ս կարող էք օգտվել առողջության պետական ապահովագրական պոլիսից,
- Ինչպի՞սի բժշկական սպասարկման ծախսերն է վարձատրում բնակչության առողջության ապահովագրության պետական ծրագիրը,
- Մեդիայի դերը բնակչության իրազեկման հարցերում:

Բոլոր հանդիպումներում շնորհանդեսներից հետո կայացավ բանավեճ, որի ժամանակ էլ հրավիրված հյուրերը արտահայտեցին սեփական կարծիքները և խոսեցին այն հիմնախնդիրների մասին, որոնք հանդիպում են առողջապահության և սոցիալական ապահովագրության ոլորտում:

Հարցերի հիմնական մասը վերաբերում էր.

- Սահմանափակ կարողություններ ունեցող անձանց սոցիալական հետաքննությանը,
- Ամբուլատորային մակարդակով ամ էք տեսակի բժշկական տեղեկանքների և դեղատոմսերի տրվելուն,
- Քիմիաթերապիայի և ճառագայթային թերապիայի ծախսերին

Բնակչությունը հնարավորություն ուներ ստանալու պատասխաններ իրենց իսկ կողմից դրված ակտուալ հարցերին: Նախագիծը իրականացվեց Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից, նախագծի պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումն է նախարարի աշխատակազմը, հասարակության հետ հարաբերության դեպարտամենտը: Նախագիծը ընթանում էր 8 ամսվա ընթացքում Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում:

Նախագծի շրջանակներում պլանավորվեց և իրականացվեց 9 արտագնա, տեղեկատվական հանդիպում ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում: Իրականացված ակտիվությունների արդյունքում ազգային փոքրամասնությունները ավելի լավ են իրազեկված համակարգում ընթացող նարեփոխումների մասին: Աճել է ազգային փոքրամասնությունների դիմումները բժշկական հիմնարկություններում և նրանց ընդգրկվածությունը հիմնախնդիրների իդենտացման և կարգավորման հարցերին



***Մամջիսե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի բնակչության համար սկրինինգի պետական ծրագրի մասին տեղեկատվություն հաղորդվեց***

Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և ազգային սկրինինգ կենտրոնի մասնակցությամբ տարածաշրջանների բնակչությանը հաղպրդվեց լրատվություն սկրինինգի պետական ծրագրի մասին: Բժշկական ծրագրերի շնորհանդես կատարվեց 3 տարածաշրջանում (Կախեթի – Թելավի շրջանի Ղարաջալա գյուղ, Մամջիսե-Ջավախեթի քաղաք Ախաթքալաքի, Քվեմո Քարթլի – Գարդաբանի): Ծրագրի մանրամասները բնակչությանը ծանուցացրեց սկրինինգ կենտրոնի մասնագետը: Նշված ծրագրին բնակչության ընդգրկվածության ավելացման նպատակով բաժանվեցզց լրատվական նյութ:

***Պանկիսի կիրճի քիստ բնակչության հետ հանդիպում և նրանց հիմնախնդիրներին ծանոթացում***

14-22 հունիսին Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի քաղաքացիական ինտեգրման վարչության աշխատակիցը գործնական պլանի շրջանակներում գործուղմամբ գտնվում էր Պանկիսի կիրճում: Տեղում հանդիպեց քիլժիստ և օս բնակչությանը, ուսումնասիրեց գոյություն ունեցող հիմնախնդիրները:

## VI. Մշակույթ և ինքնագոյի պահպանում

Երկրի մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության և նրտանց մշակութային ժառանգությանը աջակցության նպատակով 2012 թվականը աչքի է ընկնում մի շարք հետաքրքիր նախագծերով: Հատկանշական է, որ ազգային փոքրամասնությունների մշակույթին աջակցության նպատակով իրականացված նախագծերը ինչպես «Ազգային փոքրամասնությունների մշակույթի աջակցության» ծրագիրը, այնպես էլ «Գրքի և գրականության» ծրագրի շրջանակներում: Այս վերջին աջակցությամբ հրատարկվեցին մի քանի թարգմանություն, իրականացավ այլ տիպի միջոցառումներ, ինչը այն է նշանակում, որ Վրաստանի մշակույթի և հուշարձանների պաշտպանության նախարարության մշակույթի քաղաքականություն, ուղղված է ազգային փոքրամասնությունների մշակույթի աջակցության կողմ, միայն մեկ ծրագրով չի որոշվում:

### ***Չերքեզական մշակույթի կենտրոնի աջակցությունը***

2012 թվականի փետրվարի 15-ին Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կողմից հիմնադրվեց ՀԻԻԴ «Չերքեզական մշակույթի կենտրոնը», որը ծառայում է չերքեզական մշակույթի ավադույթների պահպանմանը և սպասարկմանը: Ճ Կենտրոնը աջակցեց երկրորդ եռամսյակի միջոցառումների իրականացմանը:

### ***Գորելենների ուսուցման խմբակների բացում***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի մոտ ստեղծել է ադրբեջանական ձեռքով գործած գորգերի և գորելենների ցուցահանդես: Նշանակալից է նախագծի շրջանակներում գորգեր գործելու տեխնոլոգիայի ուսումնասիրմանը Տեղի ունեցավ աշխատանքների ցուցահանդեսՆշանակալից է-, որ նախագծի շրջանակներում գորգերի հյուսման տեխնոլոգիայի ուսումնասիրման ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում, որտեղ երեխասները տիրապետում են այս ավանդույթներին: Նախագծի շրջանակներում աշակերտները գործեցին յոթ գորելեն ըստ ադրբեջանական գորգերի զարդանախշերի: Աշակերտների համատր կազմակերպվեց էքսկուրսիա Մառնեուլի շրջանի Քեշալո գյուղ գորգ գործելու տեխնոլոգիայի տեղին ծանոթանալու նպատակով: Նախագծի մասնակից հինգ աշակերտ տեղում ծանոթացավ թել մանելու և թելը ներկելու գործընթացին:

Նախագծի մանկավարժի երաշխավորությամբ աշակերտները ընտրեցին հնագույն (ավանդական) զարդանախշեր էքսիզներ պատրաստելու համար: Պատրաստվեց 10 հիմնական էքսիզ: Լրացուցիչ պատրաստվել է տարբեր համեմատաբար պարզ զարդանախշերի 5 էքսիզ:

### ***Գրադարանների աջակցություն***

Մառնեուլի, Ախալքալաքի, Օալկայի և Նինոծմինդայի գրադարաններին հանձնվեցին համակարգչային 4 հավաքածու: Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների գրադարանների համակարգչային տեխնիկայով հագեցումը կնպաստի նրանց ընդհանուր հաղորդակցության, ընդհանուր տեղեկատվական տարածքում ինտեգրման, աշխատանքի տեմպի աճին:

***ՀԻԴ. Հեղար Ալինի. Անվան Թբիլիսիի ադրբեջանական թատրոնին աջակցություն***

ՀԻԴ Հեղար Ալինի անվան Թբիլիսիի ադրբեջանական թատրոնը «Լենքորանի վեզիրի արկածները» ներկայացման համար ֆինանսական օգնություն ցուցաբերվեց: Ներկայացումը նվիրված է ադրբեջանական դրամատուրգիայի հիմնադիր Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 200-ամյակին: Դրա հետ միասին ներկայացումը բազում տասնամյակներ չի բեմադրվել թատրոնի բեմահարթակում:

***Վաժա-Փշավելայի »Գոգոթուր և ափշինա«-ի ադրբեջաներեն հրատարակություն***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը ֆինանսավորեց ադրբեջաներեն լեզվով Վաժա-Փշավելայի Գոգոթուր և ափշինա»-ի հրատարակությունը, որը Օքտաիա Քազումովը թարգմանեց: Գիրքը օժանդակում էվրացական դասական գրականության ժողովրդականացմանը ադրբեջաներեն լեզվով, ադրբեջանցի ժողովրդի հետաքրքրության խորացմանը վրաց գրականության նկատմամբ:

***Աշուղական պոեզիայի երեկոների աջակցություն***

2012 թվականին 2 անգամ տեղի ունեցավ աշուղական պրեզիայի երեկո և նախարարությունը կազմակերպիչներին անվճար զիջեց Մ.Թումանյանի շվիլու անվան կինոդերասանի թատրոնի դահլիճը: Նման միջոցառումների աջակցությունը պետության կողմից նշանակալից է, քանզի նպաստում է ավադույթների պահպանման-խորացմանը, վրացական հասարակայության ավելի տեղեկացմանը ավադույթների մասին

***Սայաթ-Նովայի երեկո***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության ֆինանսավորմամբ տեղի ունեցավ Սայաթ-Նովայի երեկո: Ֆինանսավորվեց դրան մասնակից «Քսովելերի» համույթի հոնորարը: Սայաթ-Նովա ժողովրդական պոետի նշանակությունից ելնելով, նրա երեկոն հավասարազոր է տոնահանդեսի:

***Հայ նկարիչների ալբոմի հրատարակում***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կողմից ֆինանսավորվեց Վրաստանում գործող հայ նկարիչների ալբոմի հրատարակությունը: Ալբոմում զետեղվեց Վրաստանում գործող 22 հայ նկարչի աշխատանքներ, որը ներկայացրեց Վրաստանում գործող հայ նկարիչների ստեղծագործությունների կատարյալ պատկերը:

***Հայ գրականության անթոլոգիա վրացերեն***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կողմից հրատարակվեց հայ գրականության անթոլոգիա վրաց լեզվով, որտեղ զետեղվեց հայ գրականության լրիվ պատկերը դասական ժամանակաշրջանից մինչև օրս:

***[www.cau.lib.ge](http://www.cau.lib.ge)- կայք-էջի վրա վրացի, ադրբեջանցի և հայ գրողների ստեղծագործությունների ժողովրդականացում***

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության ֆինանսավորմամբ հովանավորվեցին նախապատրաստական աշխատանքները [cau.lib.ge](http://cau.lib.ge)-կայքի վրա վրացի, ադրբեջանցի

### կատարման հաշվետվություն

և հայ գրողների ստեղծագործությունների ժողովրդականացման համար: Նախագծի շրջանակներում աշխատանք ստացան 6-8 մարդ: Կայքը օժանդակում է կովկասյան գրականության սիստեմավորմանը՝ միասնական ձևաչափի բերումը, պրիվ տեղեկատվական պատկերի ստեղծմանը:

### *Մուլտիթեմիկական արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ»*

#### *փառատոն «Մեկ երկնքի տակ»*

Տեղի ունեցավ փառատոն «Մեկ երկնքի տակ», որին մասնակցեցին Թբիլիսիի և ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների արվեստի դպրոցի աշակերտները և ազգագրական համույթները (15 դպրոցի 175 աշակերտ): Միջոցառումն անցկացվեց Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության հովանավորությամբ: Փառատոնը անց է կացվում ամենամյա և ոժանդակում է միջմշակութային երկխոսության խորացմանը, ավանդույթների փոխադարձ ծանոթությանը, գիտելիքների փոխանակմանը և կապերի խորացմանը: Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարի հրամանով 11 մանկավարժի (ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ) շնորհվեց վաստակավար ուսուցչի կոչում և փոխանցվեց միանվագ մրցանական 300 լարիի չափով: Իսկ բոլոր մանկավարժներին փոխանցվեցին մեդիաֆլայերներ և պատվոգրեր:

#### *Թբիլիսիի բազմազգ փառատոն*

Փառատոնը տեղի ունեցավ Թբիլիսիում բնակվող տարբեր ազգային խմբերի մասնակցությամբ, որտեղ ներկայացվեց ազգային խմբերի բանահյույությունը, ազգագրությունը, ավանդույթ-սովորությունները, նմուշներ և այլն՝ 2-օրյա փառատոնի շրջանակներում կայացավ ազգային կերակրատեսակների համտեսում, բաղադրատոմսերի փոխանակում, թբիլիսյան խոհանոցի ցուցադրում, ինչպես տարբեր ազգային խոհանոցների միահյուսման արդյունք: Նախագծի նպատակը ներկայացնում էր Թբիլիսիում բնակվող վրացի և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների միմյանց հետ մերձեցում, այդ դեպքում համերադիս վերաբերմունքի ձևավորում, համագործակցության միջավայրի ստեղծում, մշակութային և ազգագրական առանձնահատկությունների ծանոթացում և քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացում: Փառատոնը ընկալում էր 2012 թվականի ապրիլի 20-ից մինչև հունիսի 9-ը: Փառատոնին մասնակցում էր մոտավորապես 150 բենեֆիցիար:

#### *Իլիա Ճավճավաձեի անվան Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան*

Իլիա Ճավճավաձեի անվան Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը ակտիվորեն ընդգրկված է ազգային փոքրամասնությունների մշակութային և ստեղծագործական միջիցառումների աչակցության գործունեությանը: Ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին և անհատական անձանց հնարավորություն է տրվում կիրառել ինչպես ազգային գրադարանի դահլիճները, այնպես էլ ֆոնդերում պահպանվող նյութերը: 2012 թվականի հաշվետու ժամանակաընթացքում ազգային գրադարանը հյուրընկալեց մինչև տասնհինգ տարբեր տեսակի միջիցառումներ: Դրանք են.

- Չերքեզական լեզվի և գրականության օր Թբիլիսիում,

- Հայ գրատպության 500-ամյակին նվիրված ցուցահանդես,
- Չերքեզական դրոշի օր ազգային գրադարանում,
- Վրաց-չեչենական ժուռնալիստական համաժողով,
- Միջոցառում «Գնչուները Վրաստանում», Համերաշխության անկյան բացում,
- Պրոֆեսոր Տատյանա Դուդենկոյի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո,
- Հայ նկարիչ Գայանե Խաչատրյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկո «Ընկերները հիշում են» խորագրով,
- Օս բանաստեղծ, թարգմանիչ ( հասարակական գործիչ Գիորգի Բեսթաուրի 80-ամյակին նվիրված հոբելյանական երեկո,
- Վրաց-թուրքական հարաբերությունները արտացոլող ցուցահանդես-կոնքերանս,
- Չերքեզական ցուցահանդես,
- Հայ լուսանկարիչ Խաչատուր Վարդանյանցի լուսանկարային ցուցահանդես,
- Հայ լուսանկարիչ Խաչատուր Վարդանյանցի լուսանկարային ցուցահանդեսի ցուցանմուշների էլեկտրոնային տարբերակների տեղադրում ազգային գրադարանի էլեկտրոնային գրադարանի «Իվերիելի» ֆոտոհավաքածուում,
- Վրաստանի բելուսական համայնքի միջազգային միության «Սիաբր»-ի անդամ Էլինա Ուրունովայի ստեղծագործական բանաստեղծական-երաժշտական երեկո,
- Վրաց-ադրբեջանական – հայ-ռուսական հաճախականային բառարանի» էլեձտրոնային տարբերակի շնորհանդես,
- Խանուկի հրեական տոն ազգային գրադարանում: